№ 80 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 13 1908 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 13 № 80

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւր քան իւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երկուշաբթի, ապրիլ 14-ին
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ
Թիֆլիսի գործակատարների փոխադարձ օգնութեան ընկերութեան միջոցները շատացնելու համար
Տեղի կունենայ
ԱՌԱՋԻՆ
Գարնանային մեծ
ՋԲՕՍԱՆՔ
Վիճակախաղ-ալեգրիով
Վենետիկի ջրանցք նաւակներով (գոնդոլ), նկարչական կէօսկներ, զատկական ձու, պասկա-հսկայ, այլ և այլն։ Ֆրանսիական կարթեր, ծաղիկներ, կոնֆէտտի, սերպանտին, բուֆէտ, ՊԱՐԵՐ։
Այգում կը նուագեն երկու զինւորական նուագախումբ և սազանդար։ Այգին գեղեցիկ կերպով զարդարված կը լինի դրօշակներով և կանթեղով, իսկ երեկոյեան—հրավառութեան մէջ։
ՍԿԻԶԲՆ Է ՑԵՐԵԿՎԱՅ ԺԱՄԸ 2-ԻՑ
Մուտքի վճարը մեծերի համար 30 կ., երեխաների համար 20 կ.։ Իւրաքանչիւր երեխաների տոմսակը մուտքի մօտ ստանում է մի բէգինի շար ձրի։
(6, 10, 13) տ. 3—3

ԳԱՅԻԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ ապրիլի 23-ին, չորեքշաբթի
Թիֆլիսի ժողովարանի ամառային այգում
Կայանալու է
ՄԵԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ
ՋԲՕՍԱՆՔ
Յօգուտ դպրոցի
Վարչութիւնը կոչ է անում դպրոցի բոլոր նախկին սանուհիներին Մօղնու եկեղեցու բոլոր ծխականներին աջակցել զբօսանքի աջողութեանը՝ նուիրելով և հաւաքելով վիճակախաղի համար զանազան իրեր, որոնք պէտք է հասցնել կարգադրիչ տիկին Մ. Ցարութինեանին, Грибоѣдовская, 23, соб. домъ.
տ. 2—1

„РОССІЯ" ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
կնքում է հաստատ հիմունքներով և նպաստաւոր պայմաններով հետեւեալ ապահովագրութիւնները.
Օժիտ աղջիկների համար
Ստիպենդիաներ տղաների համար
Դրամագլուխներ ծերութեան հասակում
Դրամագլուխներ մահվան դէպքի համար
Եկամուտներ ցկեանս
Այրիական պենսիաներ
Առ 1-ն յունվարի 1908 թ. ապահովագրված էին 86942 անձինք
182,140,000 ՌՈՒԲԼՈՒ
Մանրամասնութիւնների մասին դիմել վարչութեան՝ Պետերբուրգ, Морская 37, և գործակալներին կայսրութեան միւս քաղաքներում, իսկ Թիֆլիսում՝ Сергіевская 4.
(13, 20, 27) տ. 3—1

Մեծադիր պատկերների
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ԼԵՒՈՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ
(Գանօվսկայա փողոց № 7)
Ընդունվում են ամէն տեսակ պատուէրներ՝ լուսանկարած մեծ ու փոքր պատկերներից և մեծացվում են գեղարուեստական ճաշակով մինչև ցանկացված չափը։
Գները մինչև առաջիկայ Զատիկը
ԷԺԱՆԱՑՎԱԾ ԵՆ
3 րուբլուց սկսած
Արհեստանոցը մինչև Զատիկ բաց կը լինի և կիրակի օրերը մինչև ժամը 4-ը։
(տ. օ.) տ. 10—7

Լոյս տեսաւ
Յոբելեանական յանձնաժողովի հրատարակութեամբ
Լ. ԲԱԲԱՅԵԱՆԻ
„ԼԷՕ"
Կենսագրական-գրական ակնարկ նրա 25-ամեայ յոբելեանի առիթով.
ԳԻՆԸ 40 ԿՈՊ.
Վաճառվում է բոլոր գրավաճառների մօտ։
(13, 18, 20) տ. 3—1

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
Բաղդադի յայտնի ֆիրմայի, ստացված է Թիւրքիայից և ծախվում է գործարանային գներով ԼԱՐՃԷԻ սերմերի դէպօում, Միխայլօվսկի պրօսպէկտ, № 23, Զ. ՄԱՆԻՆՎԻ մագազինում՝ Պուշկինսկայա փող., ուղղակի սեմինարիայի հանդէպ, Ի. Մ. ՄԱՄՈՒԼՕՎԻ գինետանը՝ Գօլօվինսկի պրօսպէկտ, № 25.
տ. (տ. օ.) 10—7

Վազերի բժշկութեան համար
ԱՄԵՆԱԼԱՒ
Ծծումբը
(ՔՕՔՈՒՐՏ)
է
Աշխարհահռչակ
ՄԱՐՍԷՅԼԻ
„ԲՈՒԴ"
գործարանի ծծումբը
(Չը կորցնէք պարկի նկարը՝ որ չը սխալվէք)
Գումարով գնողներին արժան առաջարկում է Կ. Կ. ՕԶԻԱՆԴԷՐԸ, Թիֆլիս, Բեբուտօվսկայա փողոց, № 53.
(կ.) տ. 5—2

ԳԱՂԱՓԱՐԻ ԱՌԱՋ

Մարդկային կեանքում մենք ոյժերի ոյժ և իրերի վերջնական տէր ճանաչում ենք Գաղափարը։

Եթէ ազնիւ է Գաղափարը, փրկարար է նրա իմաստը, ստեղծագործող է նրա էութիւնը, նա չէ կարող մեռնել, չէ կարող թաղվել։

Եւ եթէ բռնի կերպով նրան կը ճնշեն, դա կը լինի ժամանակաւոր մի երևոյթ։ Գաղափարը նորից յարութիւն կառնէ և աւելի ուժգին ձայնով կը հնչեցնէ աշխարհին իր ասպարէզ ելնելը։

Մենք, որ խորին կերպով հաւատացել ենք Գաղափարի ոյժին, ամենածանր փորձութիւնների օրերում վըստահ կերպով առաջ ենք գնացել Գաղափարի ապագայ յաղթանակների յոյսերով։

Ի՞նչ է ասում մարդկութեան պատմութիւնը։

Նա գիտէ շրջաններ, երբ կեանքի մէջ կեղծիքը, անազնիւը, բռնին և յանցաւորը տիրանում էին ժամանակակից մտքերի և սրտերի վրա։ Մարդկային հոգին տառապում էր և տանջվում։ Այդ ծանր մղձաւանջի օրերում արդարութեան ձայնը սկզբում մնում էր ընկճված և խեղդված. բայց կամաց կամաց նա զօրանում էր և յանկարծ նա հանդէս էր գալիս ուժգին շեշտերով՝ լսեցնելու մարդկանց իր պատգամները։ Կըռվում էին մղձաւանջի հերոսները, բայց Գաղափարը գնում էր իր ճանապարհով։

Հին աշխարհը իր պարզամտութեան մէջ մի օր փորձեց ստորացնել Գաղափարը, գամելով նրա ժամանակակից վեհագոյն ներկայացուցչին խաչի վրա, որ այն դարերի նախատինքի և ամօթի նշանն էր։

Բայց Գաղափարի վեհութեան առաջ խորտակվեցին մարդկային դաւերը և ստոր հաշիւները։ Եւ խաչը ոչ միայն անկարող եղաւ նրան անուանարկել, այլ և ինքը բոլորովին կորցրեց իր նախկին անարգ նշանակութիւնը և դարձաւ Գաղափարի դրօշը։

Այդպէս կը լինի ամէն անգամ, երբ ազնիւ Գաղափարը կը գործէ կեանքի մէջ։

Մարդկային ստոր բնազդների ջանքերը, կոպիտ և բիրտ ոյժի արտայայտութիւնները միայն դանդաղեցնել կարող են Գաղափարի առաջընթացութեան արագութիւնը, բայց նրան չեն կարող կանգնեցնել երբէք։

Այդ վստահութեամբ մենք առաջ ենք գնացել, հաւատալով գաղափարների յաղթական ոյժին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 12 ապրիլ

Կովկասի Փոխարքայի կարգադրութեամբ, Անդրկովկասի համար բաց թողված մատակարարական փոխատուութեան հաշւին, կրկին յատկացված է կարիքաւոր ազգաբնակութեան ուտելիքի և սերմացուի համար՝

1) Թիֆլիսի նահանգապետին 115 հազար րուբլի.

2) Գանձակի նահանգապետին 129 հազար 665 րուբլի.

3) Բաթումի շրջանի զինւորական նահանգապետին 29,045 րուբլի.

4) Սուխումի վիճակի կառավարչին 21,466 րուբլի։

Ընդամենը, յիշեալ գումարների հետ, ուտելիքի և սերմացուի համար գիւղացիութեանը իբրև փոխատւութիւն տալու նպատակով փոխադրված է՝

ա) Թիֆլիսի նահանգի համար երեք հարիւր հազար րուբլի,

բ) Գանձակի՝ 599,665 րուբլի,

գ) Բաթումի շրջանի՝ 43,497 րուբլի և

դ) Սուխումի վիճակի 43,996 րուբլի։

Իսկ մինչև օրս, վերոյիշեալ փոխատւութեան գումարներից, Անդրկովկասի ազգաբնակութեան ուտելիքի և սերմացուի պէտքերի համար ընդամենը տրված է 1,709,202 ր.։ («К.»)

—

Պետերբուրգ, 8 ապրիլ

Պետական Դումայի պատգամաւորների մէջ լուր տարածվեց, որ Զատկի առաջին օրը Բարձրագոյն հրովարտակ է հրատարակվելու ամնիստիայի մասին, որ տարածվելու է 129-րդ յօդուածով երեք ամսով բանտարկութեան դատապարտվածների վրա։ Այդպիսով ամնիստիան կը վերաբերի նաև Վըբորգեան կոչը ստորագրած առաջին Դումայի դատապարտված անդամներին։ («Кс.»)

—

Պետերբուրգ, 10 ապրիլ

Պետական Դումայի մահմեդական ֆրակցիան որոշեց Զատկի արձակուրդներին պարապմունքները շարունակել։ Աշխատանքների ծրագրի գլխաւոր կէտերն են. Կովկասում զեմստվոյին հաստատութիւններ մտցնելու հարցը և պատրաստվել առարկելու աջակողմեանների հարցապընդման՝ Կովկասի փոխարքայութեան իրերի դրութեան մասին։ («Кс.»)

—

Բագու, 10 ապրիլ

Այսօր կէսօրին Բալախանում յարձակում կատարվեց «Կասպիական ընկերութեան» գանձապահի վրա, որ Սալեանսկի գնդի չորս զինւորների ուղեկցութեամբ 24,000 րուբլի էր տանում ծառայողների ռոճիկները բաժանելու համար։

Գանձապահը և զինւորներից երկուսը սպանված են. միւս երկու զինւորները և մի քանի բանւորներ ծանր վիրաւորված են։ Յափշտակված է մօտ 800 րուբլի։

Միաժամանակ յարձակման ենթարկվեց Բալախանեան ընկերութեան գանձապահը, որին ուղեկցում էին երկու պահակներ։ Յափշտակված է գանձապահի մօտ եղած ամբողջ գումարը՝ 2900 րուբլի։

Կողոպտիչների ուժեղ հրացանաձգութիւնից բարեբաղդաբար ոչ ոք չը վնասվեց։ («Հ. Գ.»)

—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՅԺՄ Է ԶԱՏԻԿԸ

Պատմուածք

ՇԱՀՐԻԱՐԻ

I

Արցախի Խաչէն երկրի իշխանների դաստակերտ Վաճառ աւանը փրկչական 1250 թւականին, Զատկի աւագ շաբաթ օրը, մեծ իրարանցումի և յուզման մէջ էր։

Քաղաքից բացակայ էր մի տարուց ի վեր իշխան Ջալալ-Դօլան և երկիրը կառավարում էր նրա իմաստուն և բարեպաշտ ամուսին՝ գեղանի Մամքան թագուհին։

Այն օրից, երբ Թաթարների Չարմաղան զօրապետի առաջնորդութեամբ թաթարները մորեխի նման սփռվեցին Հայաստանի բոլոր տեղերը և անկիւնները, հրով և սրով ոչընչացնելով, ջնջելով, ամայացնելով երկիրը, Խաչէնը, չը նայելով իր ամուր դիրքին, չը նայելով իր քաջ իշխան Ջալալ-Դօլայի հերոսական սխրագործութիւններին, չը կարողացաւ ազատ մնալ ընդհանուր աւապատակութիւնից և Խաչէն ու Թարթառ գետերը ներկվեցին հայերի յորդ արիւնով։ Բայց ահա մի քանի տարի է աւապատակութիւնները դադարել էին, մորեխանման վայրենի հորդաները անհետացել էին, գուցէ նորից, աւելի մեծ յորդութեամբ երևալու. ժողովուրդը սկսել էր մի քիչ շունչ առնել և Ջալալ-Դօլա իշխանը մի արշաւանք էր սկսել վաչկատուն և աւազակաբարոյ մի քանի ցեղերի դէմ, որոնք, Մռաւ սարի անտառախիտ ծերպերի մէջ ապաստանած, պարբերաբար աւապատակութիւններ էին կատարում Խաչէնի հայ գիւղերի վրա, թալանում, աւերում և կոտորում։

Ջալալ-Դօլա վաղուց վճռել էր օրինակելի պատիժ տալ այդ աւազակաբարոյ ցեղերին և մի տարուց ի վեր իր զօրագնդով բացակայ էր իր դաստակերտ Վաճառ աւանից, որի կառավարութիւնը յանձնել էր Խաչէնի հայոց թագուհուն, Մամքան դշխոյին։

Նախորդ գիշերը, շատ ուշ, երբ թագուհին և ամբողջ ժողովուրդը, հաւաքված ս. Ստեփաննոս եկեղեցում, հեկեկում էին լսելով Քրիստոսի չարչարանաց ողբը, որ երգում էր Աղուանից կաթողիկոսարանից եկած եպիսկոպոսը, մի սուրհանդակ իր փըրփըրած ձին կանգնեցրեց եկեղեցու դռան առաջ, տէգը ցցեց գետնի մէջ, վահանը կախեց եկեղեցու մեծ դարբասից և բարձրաձայն գոռաց.

— Մեծ է իշխան Ջալալ-Դօլայի փառքը և զօրութիւնը. նա վերադառնում է յաղթապանծ, անհագին աւարով, անհամար գերիներով։

Մի ակնթարթում եկեղեցին ամբողջ իրար խառնվեց. ողբը ընդհատվեց, ժողովուրդը դուրս թափվեց գաւիթը և բակը լսելու սուրհանդակի տեղեկութիւնը, բայց թագուհին, մի հրամայողական սաստով, հարցրեց.

— Ո՞վ է համարձակվում խանգարել աստուածային ժամերգութիւնը այն րոպէին, երբ մեր Փրկիչը խաչի վրա չարչարվում է։

— Սուրհանդակ է եկել, թագուհի, իշխանի մօտից. վաղը նա իր բանակով այստեղ կը լինի,—ասաց նաժիշտներից մինը։

— Սուրհանդակը կարող է սպասել մինչև ժամերգութեան վերջը։

Եւ դառնալով դէպի ատեանը, թագուհին ասաց.

— Արքայազն հայր, շարունակեցէք ժամասացութիւնը։

Ողբը վերսկսվեց. ժողովուրդը նորից մտաւ տաճարը։

Թագուհին ծունկ չոքեց, սկսեց ջերմ աղօթել և հեկեկալ։

Բայց այս անգամ նա ջերմեռանդ և անկեղծ աղօթքի հետ արտասւում էր ուրախութիւնից, լսելով իր սիրեցեալ, իր պաշտելի ամուսնու ողջ-առողջ վերադարձը։ Միայն նրա բարեպաշտ սիրտը սաստիկ ալեկոծվում էր նրանից, որ չէր կարողանում զսպել իր ուրախութիւնը. նա կարծում էր, գուցէ մի սոսկալի, մահացու մեղք է գործում, որ այդ ժամին, երբ աշխարհի Փրկիչը, տարածված խաչի վրա, գամված բեւեռներով, չարչարվում էր և մահվան դառնութիւնը ճաշակում, երբ ամբողջ տիեզերքը, ինչպէս մի փոքր առաջ ընթերցվեց աւետարանի մէջ, տանջանքի երկունքի մէջ է բռնված, նա՝ թագուհին ուրախութիւն էր զգում և տոգորվում երկրաւոր զգացումներով։

Եւ փղոսկրեայ ճակատը կպցնելով վերնատան սառն սալայատակին, որի վրա նա չոքած էր, Մամքան թագուհին շշնջաց.

— Ով Տէր Յիսուս, ով Փրկիչ աշխարհի, ողորմիր ինձ, ներիր և մի դատապարտիր։

Այս լռելեայն աղերսի հետ միասին թագուհին խոստացաւ սեղանի համար մի նոր ոսկեղնագործ և մարգարտաշար վարագոյր գործել և նուիրել ու եօթն օր ծոմ պահել կարծեցեալ մեղքի քաւութեան համար։

Ժամասացութիւնը վերջացաւ. կէս գիշերից բաւական անցել էր արդէն։ Նաժիշտները մոմակալները ձեռին առաջնորդեցին թագուհուն վերնատնից ներքև, գաւիթը, ուր եպիսկոպոսը կանգնած սպասում էր։

Մամքան թագուհին մօտեցաւ, համբուրեց եպիսկոպոսի աջը, որ խաչակնքեց նրան, և երկուսը միասին դուրս եկան եկեղեցու մեծ բակը, որ լուսաւորված էր ձէ-

Պետերբուրգ, 11 ապրիլի

Երէկ, ցերեկվայ ժամը 3-ին, արտաքին գործերի մինիստրութեան մէջ, հօֆմէյստէր Իզվօլսկի, գերմանական դեսպան կոմս Պուրտալէս, շվէդական դեսպան գեներալ Բրանդշտրէմ և դանիական դեսպան Լիվենէրն Ռուսաստանի, Գերմանիայի, Շվէդիայի և Դանիայի կողմից ստորագրեցին այն դեկլարացիան, որի համաձայն յիշեալ պետութիւնները, իբրև Բալտիական ծովին մերձ գտնվող մեծ պետութիւններ, փոխադարձաբար ճանաչելու են տերրիտօրեալ status quo-ի սկզբունքը, այսինքն՝ անխախտելի կերպով ընդունելու են այժմեան հողային սեփականութիւնները այն երկիրներում, որ մօտ են ընկած այդ ծովին։

Միաժամանակ Բերլինում, Գերմանիայի, Դանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Հօլլանդիայի և Շվէդիայի լիազօրների միջև, յիշեալ պետութիւնների՝—իբրև Հիւսիսային ծովին մօտ գտնվողների կողմից, պէտք է նման արձանագրութիւններ ստորագրվեն Հիւսիսային ծովի վերաբերեալ, իսկ Ստօկհօլմում, Շվէդիայի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների միջև մի արձանագրութիւն՝ Ղրիմի պատերազմի ժամանակ այդ պետութիւնների միջև 1855 թւի նոյեմբերի 21-ին կնքված դաշնագրութիւնը վերջնականապէս բարձելու մասին։

Ռուսաստանի հետ կապած յիշեալ արձանագրութիւնների բնագիրը այսօր և եթ յանձնվեց արդարադատութեան մինիստրութեան՝ սահմանված կարգով պաշտօնապէս հրատարակելու համար սենատի միջոցով։ («Հ. Գ.»)

—

Բերլին, 11 ապրիլի

Երէկ, արտաքին գործերի մինիստրութեան մէջ, տեղի ունեցաւ Հիւսիսային ծովի մասին կայացած համաձայնութեան ստորագրութիւնը։

Համաձայնութիւնը ստորագրեցին արտաքին գործերի քարտուղար ֆօն-Շէն, մեծ-բրիտանական դեսպան Լասսէլս, ֆրանսիական՝ Կամբօն, դանիական՝ ֆօն-Խեգերման, շվէդական՝ կոմս Տաուբէն, նիդէրլանդական՝ բարօն Գեվերս։ Հրատարակութեան ժամանակի մասին կայանալու է նոր համաձայնութիւն։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 10 ապրիլի

Երեկոյեան ժամը 9½-ին վախճանվեց մանջուրական զօրաբանակի նախկին գլխաւոր հրամանատար գեներալ-ադիւտանտ Լինէվիչը։ («Հ. Գ.»)

—

Լօնդօն, 9 ապրիլի

Վախճանվեց նախկին առաջին մինիստր Կեմպբէլ-Բաններման։ («Հ. Գ.»)

—

Կ. Պօլիս, 31 մարտի (ն. տ.)

Ութ օխա կչռող մի ռումբ գտնվեց Ըլըդըզի հարեմին յատկացված բնակարաններից մէկում։ Դա ստոյգ լուր է։ Ըլըդըզում եկամուտք ունեցող և այնտեղ անցած-դարձածին քաջ ծանօթ մի անձ յայտնեց ինձ այդ։ Ռումբի յայտնութիւնը գագաթնակէտին հասցրեց այն սարսափը, որ առանց այն էլ տիրում էր սուլթանին և նրան շրջապատողներին։ Հարեմի բազմաթիւ կանայք և ներքինիներ անհետացել են։ Խիստ կերպով որոնում են այդ դաւադրութեան հեղինակներին։ («Le Matin»)

—

Կ. Պօլիս, 26 մարտի

Անգլիական կառավարութիւնը Բ. Դռնից պահանջում է այն 15,000 օսմ. ոսկին, որ վերջերս որպէս փրկանք վճարված էր յոյն չէտաների կողմից առևանգված անգլիահպատակ Աբոտի համար։ Դուռն իրան արված այս պահանջի առիթով դիմել է Մակեդոնիայի ընդհ.-տեսուչ Հիլմի փաշային։ Վերջինս յայտարարել է, թէ ինքը պատրաստ է յիշեալ գումարից 9000 ոսկին վճարել, յայտնելով որ այդ գումարը գտնվել է Աբոտին առևանգող յոյների մօտ, որոնց մի մասը ձերբակալված է արդէն։ Գալով մնացեալ 6000 ոսկուն, Հիլմի փաշան վճռապէս մերժում է վճարել այդ գումարը, առարկելով որ Աբոտի առևանգումը տեղի է ունեցել մասնաւոր բնակարանից։

—

Գանձակ, 8 ապրիլի

Ապրիլի լոյս 8-ի գիշերն անյայտ գողեր քաղաքից 5 վերստ հեռաւորութեան վրա գտնվող հռչակաւոր «Զօլակ» ուխտատեղի-եկեղեցու դուռը կոտրատելով՝ գողացել են մոմակալները, խաչը, երեք խալիչա և մի քանի մանր իրեր՝ մօտ 120 ր. արժողութեամբ։ Գողերը սեղան չեն բարձրացել և սեղանի վրա գտնվող արժէքաւոր սրբութիւններին ձեռք չեն տուել։ Վերջին օրերս ուխտաւորաց պահապան ծերունի Սողոմոնի հիւանդութեան պատճառով ուխտատեղին թողնված է եղել «Զօլակ»-ի խնամքին։ Պրիստաւը այդ առիթով արձանագրութիւն է կազմել։ Գողերի հետքը չէ գտնված։

Սագան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Տող գիւղ (Դիզակ), 30 մարտի

Մեր գիւղում կայ 2 դպրոց՝ պետական և եկեղեցական-ծխական, որոնք փակվել են մեր գաւառամասում տարածված վարակիչ հիւանդութեան պատճառով։

Համաճարակը արդէն բաւական զոհեր է տարել. Թաղոտ գիւղում՝ 40 հոգի, Հակակու գիւղում՝ 8, Մոխրենիս գիւղում՝ 6, Տողում՝ 2 հոգի։ Բայց ո՞վ է մտածում այս բոլորի համար։ Ժողովուրդը ծածկում է իր ախտը, իսկ գաւառական ֆելդշերն էլ առանց դրական միջոցներ ձեռք առնելու ստիպված է լինում թողնել ու գնալ։ Լսել ենք, որ մեր ծխական դպրոցի ուսուցիչ Ս. Իսրայէլեանցը հեռագրել է Բաքուի կուլտուրական միութեան և պահանջել բժիշկ ուղարկելու, բայց մինչև օրս ոչ մի տեղեկութիւն չը կայ։ Չը գիտենք էլ ինչու համար է կուլտուրական միութիւնը, երբ այս տեսակ ճգնաժամին օգնութեան չէ հասնելու խեղճ ու կրակ ժողովրդին։

Ն. Սարգսեանց

—

Վաղարշապատ, 20 մարտի

Այս տարի բնութիւնն էլ կարծես թէ երես է դարձրել մեր խղճուկ գիւղացուց, որովհետև մարտի 18—19 է, հետևաբար աշխատանքի ամենալաւ ժամանակը (այժմ պէտք է այգիները բաց արված լինէին), բայց յաճախակի անձրևն ու ձիւնը չեն թողնում, որ եղանակը տաքանայ, նոյնիսկ սաստիկ ցրտի պատճառով ջուրը առուներում սառչում է։

Վառարանները դեռ ևս վառում են։ Ի հարկէ խօսքս հարուստների մասին է։ Ապա ո՞ւր գնայ և ի՞նչ անի բանւոր դասակարգը, որ ամբողջ ձմեռը գրեթէ սոված է անցկացրել, սպասելով գարնան գալուն, որ գնայ և իր գլխի ճարը տանի։

Մենակ այս հանգամանքը չէ, որ ճնշում և խեղճացնում է ժողովրդին, այլ կայ մի ուրիշ հանգամանք ևս, որ նոյնիսկ յուսահատեցնում է նրան. դա հաց չունենալու խնդիրն է։ Վաղարշապատի աղքատ դասակարգը խնդիրներով դիմում է Էջմիածնի սինօդին՝ փոխարինաբար ցորեն խնդրելով։ Այսօր էլ ձիւն է գալիս։ Մէկ խօսքով գիւղացու դրութիւնը վերին աստիճանի յուսահատական է, մինչև որ մօտաւորապէս կէս արշին ձիւն է եկել։ Քիւրդ հովիւները, որոնք ոչխարները բերել էին այստեղ, այսօր՝ լցված գիւղը՝ երեխայի նման լաց են լինում ոչխարների համար գոմ խնդրելով։

200 վաղարշապատցիք, որոնց թւում նաև տեղական դպրոցների աշակերտները, լցված Էջմիածնի սինօդի բակը և նախասենեակները՝ հաց, վարելահող և դպրոցների համար շինութեան տեղ էին խնդրում։

Գիւղիս շուկայից միս գնելը ամենադժուար բանն է, որովհետև այնքան չեն մորթում միս, որ բոլորին բաւարարութիւն տրվի, և որ գլխաւորն է՝ ամենից առաջ իրանց խնամի տուղերին են բաւականութիւն տալիս մսագործները, ապա, եթէ մնում է, տալիս են ժողովրդին, այն էլ ոչ նշանակված գնով։

Տուղերի ծառաները օգտվելով այն հանգամանքից, որ միսը ծախվում է ժողովրդին թանգ գնով, փոխանակ գնելու այնքան, որքան իրանց խօզէիններին հարկաւոր է, գնում են ահագին քանակութեամբ և այդ աւելորդը տանում ծախում են ուրիշին թանգ գնով և փողը գնում գրպանները։

Տեղական իշխանութիւնը ուշադրութիւն չէ դարձնում այս հանգամանքի վրա։

Այս կամայականութեան և մի տեսակ առանձնաշնորհման վերջ տալու համար տեղական տանուտէրը պարտաւոր է հասարակական ժողով գումարել և համախօսական վճիռ կազմել, պարտաւորեցնելով մսագործներին, որ բոլոր միս գնողներին բաւարարութիւն տան առանց մենաշնորհների։ Միսը պէտք է ծախվի միևնոյն գնով՝ լինի գնողը աղա, թէ բանւոր։ Ահա այս է միակ միջոցը, որ կարող է կարգ և կանոն մտցնել Վաղարշապատի մսագործների մէջ։

Այս էլ պէտք է ասել, որ՝ բացի մսից ուրիշ ոչ մի կենսական մթերք չը կայ Վաղարշապատում, որպէսզի միս չը լինելու դէպքում կարելի լինի ուրիշ բան գնել։

Թունիկ

ԲԵԼՕՍՈՒԽԱՐԻ ԴԻՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

—

Բելօսոււար, 5 ապրիլի

Փետր. 27-ի երեկոյեան ժամը 6-ին ռուս-պարսկական սահմանի այս կէտում, ճանապարհի վրա հետևեալ դէպքը պատահեց։ Երեք սահմանապահ զինուոր իրանց պօստից յետ էին դառնում յոգնած-դադրած։ Մի պարսիկ աւազակախումբ, բաղկացած մօտ 20 հոգուց, դարան մտնելով, հրացանային երեք համազարկ է տալիս և զինուորներից երկուսին անդամահատ սպանում, իսկ երրորդի ձեռքերին ու ոտքերին ութ վէրք հասցնում։ Այս վերջինս մինչև օրս էլ հիւանդանոցումն է։ Աւազակները զինուորների երեք հրացաններն էլ տանում են։

Աւազակային խմբի այդ ոճրագործութիւնը խստիւ գրգռել էր ռուս սահմանապահ զինուորներին։ Եւ դեռ այդ գրգիռը չանցած՝ վրա հասաւ մի ուրիշ դէպք, որը գագաթնակէտին հասցրեց ռուս զինուորների զայրոյթը։ Այդ դէպքը հետևեալն է։

Սահմանապահների ռոտմիստր Դվօէգլազօվի—որի քաջութեան հռչակը տարածված էր ռուս-պարսկական սահմանի այս շրջանի ամբողջ տարածութեամբ—ձին մարտի 30-ին, կէսօրից յետոյ, պօստից փախչում է և անցնում հարևան Թալիշ-Միքիլլու գիւղի միջով։ Ռոտմիստրի Թուրք ծառան հեծնում է մի ուրիշ ձի և քշում փախչող ձիու ետևից։ Ծառան չի կարողանում ձին յետ բերել, որովհետև յիշեալ գիւղում նրա ձեռքից խլում են ձին ղօջաբէկլուեցիները, որոնցից մի մաս այդ րոպէին գտնվում է եղել այդ գիւղում։

Վերոյիշեալ դէպքերի նման պատահարներ յաճախ են տեղի ունենում այս շրջանի ռուս-պարսկական սահմանային գիւղերում, բայց միշտ էլ փախած կամ կորած անասունը բռնվել կամ գտնվել է ու յետ դարձվել իր տիրոջը։

Ռոտմիստրը և երեք զինուորներ ձի հեծնելով անցնում են յիշեալ գիւղը, որը գտնվում է պարսկական հողի վրա։ Բայց դեռ ձին չը գտած՝ գնդակահար են լինում։ Իսկոյն օգնութեան են հասնում մնացեալ զինուորներն ու սարաժնիկները։ Գիւղը օգնութիւն էր ցոյց տալիս աւազակային խմբին։

Ռուսների կորուստն է 4 սպանված և 5 վիրաւոր։ Պարսիկների կորուստն է՝ 35 հոգի սպանված։

Մարտի 31-ին դրութիւնը խաղաղվեց։ Ամեն կողմից—Սալեանից, Լէնքօրանից և Բագուից—օգնութիւն էր հասնում ռուսներին։

Բագուից եկաւ 2 հարիւրեակ կօզակ՝ 2 թնդանօթով։ Այդ կօզակներն ուղարկված են ղօջաբէկլուեցիների ետևից։ Լսում ենք, որ Արդաբիլից ևս ռուս զինուորներ սկսել են հետապնդել աւազակներին, համաձայն պարսից շահի կարգադրութեան, պատժելու նրանց։

Տ.-Ա.

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

—

Կովկասեան զինւորական - նահանգական դատարանին են յանձնված գիւղացիներ Քեարիմ Օսիպօվ, Հայկազ Բատրօվ, Մագաթ Բաբաքեխօվ և Յակօբ Սևեան, որոնք մեղադրվում են 1906 թ. մայիսի 14-ին, Վերին-Հաշիքենդ գիւղում (Գանձակի նահ.), ոստիկանական պահակախմբի վրա հրացաններից կրակելու մէջ, երբ վերջինս կատարում էր իր ծառայական պարտականութիւնները։

—

1907 թ. ապրիլի 5-ին Բագւում դաժանաբար սպանվեց հաշտարար դատաւորի օգնական Շիմանսկին։

Քննութիւնը պարզեց, որ Շիմանսկու սպանութիւնը կազմակերպել է Բագուի հաշտարար բաժնի քարտուղարի օգնական Ա. Աւկէրօվը, որը թշնամական զգացմունքներ էր տածում դէպի հանգուցեալը, որովհետև նա իր վատնումները բացել էր։

Դատարանը մեղաւոր ճանաչեց Աւկէրօվին վարձու մարդու ձեռքով Շիմանսկուն սպանել տալու մէջ և դատապարտեց նրան 20-ամեայ տաժանակիր աշխատանքների։

Մեղադրեալը դատարանում շարունակ ծիծաղում էր, ժպտում, գլուխ էր տալիս հասարակութեան։ («Լ.»)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Բագու, 4 ապրիլի

Ամսիս 1-ին տեղիս ժողովարանի դահլիճում կայացաւ հայկական ժողովրդական երգերի և նուագների համերգ, ղեկավարութեամբ Կոմիտաս վարդապետի։

Երկսեռ երգեցիկ խումբը, որը բաղկացած էր մօտ 70 հոգուց, մեծ աջողութեամբ երգեց 20-ից աւելի ժողովրդական երգեր։ Աւելի աչքի ընկան իրանց աջողութեամբ «Կալերգը» (Լօռի), «Մայլերգը» (Վայոց Ձոր), «Կայնել ես՝ կանչում էլ չես», «Փայփուրի», «Վարանդայի գութաներգը» և ուրիշները։ Հրաշալի կերպով ինքը Կ. վ. իր նուագածութեամբ դաշնամուրի վրա երգեց՝ «Հով արէք սարեր ջան», «Անտունի», որոնք բուռն ծափահարութեամբ կրկնվեցին։

Բաւականին աջող էին և օր. Հաղաթեանի և պ. Տէր-Առաքելեանի զուգերգները, նամանաւանդ «Հաբրբան»-ը, որը կրկնվեց։

Աջող կերպով մի քանի հատ երգեց Տ. Առաքելեանը մենակ, որոնցից մի քանիսը կրկնվեց։ Պարոնը բաւականին դուրեկան և սիրուն ձայն ունի։

Տիկին Կարա-Մուրզայի նուագածներից աջող էին ի միջի այլոց «Մշոյ շորոր», «Մանուշակի» և «Ռանգի»։

Բոլոր նուագածներն ու երգերը, որոնք թւով 24 էին, գրի առել ու դաշնակել էր ինքը՝ Կոմիտաս վարդապետը։ Կոմիտաս վարդապետը ստացաւ մի բաւական շքեղ թանգագին ընծայ։

Ժողովարանի ահագին դահլիճը լիքն էր ժողովուրդով, և հանդիսականները ցրվեցին գոհ սրտով։

Այսօր Մարդասիրական ընկերութեան դահլիճում էժանացրած գներով կրկնվելու է այս համերգը։

Միրոն-Քնար

—

Գանձակ, 7 ապրիլի

Գանձակի քաղ. ուսումնարանի չքաւոր աշակերտների օգտին զատկական տօների առիթով մի ներկայացում է տրվելու, որի նախաձեռնողն է նոյն ուսումնարանի կրօնուսույց Գ. սարկ. Գէորգեան։ Ներկայացումը տեղի կունենայ նոյն քաղ. ուսումնարանի դահլիճում։

Վա. Եպիսկոպոսեան

—

Սամարղանդ, 26 մարտի

Ամսիս 20-ին դերասան Աբէլեանն իր խմբով այցելեց և մեր քաղաքը։ Առաջին ներկայացումը—«Օտելլօ»—որ տեղի ունեցաւ ամսիս 23-ին, քաղաքիս թատրոնում, անցաւ աջող։ Կանացի դերերը այն չէին, ինչ որ հարկաւոր էին Աբէլեանի խմբին։ Երկրորդ ներկայացումը տեղի ունեցաւ ամսիս 25-ին։ Խաղացին «Աւազակները»։ Այս ներկայացումը Աբէլեանի յօբելեանական բենեֆիսն էր։ Աբէլեանն ստացաւ նուէրներ։ Թատրոնը լիքն էր։ Յիշատակութեան արժանի է այն սիրալիր վերաբերմունքը, որ մեր սիրողների խումբը ցոյց տուեց Աբէլեանի խմբի խաղերին։

Աբէլեանն իր խմբով ճանապարհվեց Չարջօյ։

Հանդիսատես

ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ՏԱՌԱՊԵԼՆԵՐԻ ՕԳՆԻՆ

—

Ստացանք 1) Թեջենկօ կայարանից (Միջին Ասիա) Ա. Ա.-ից՝ 15 ռուբլի, 2) Մերվից, Սարգիս Պօղոսբէկեանից՝ 32 ր., 3) Կռասնօվոդսկից, Խաչատուր Լօլայեանցի ձեռքով հանգանակված, ի նպաստ Գօրիսի «Ստեփանեան» գրադարանի՝ 17 ր. 40 կ., 5) Մօսկվայից, Գ. աշակերտից՝ 8 ր., 4) Եկատերինօդարից, Մ. Բալդուրեանից՝ 5 ր., 6) Պավլոդօլսկ կայարանից (Տերէկի շրջան), Լ.-ից՝ 15 ր. 7) Բերբերից, ի նպաստ Ղազախի գ. Ուզունթալա գիւղի, մի անյայտից՝ 5 ր.,

---

թի մաշալաներով և փայտեայ խաչոյկներով։ Ժողովուրդը դաշտից մինչև մեծ դարբասը կանգնած էր երկու շարքով և, երբ Թագուհին ու եպիսկոպոսն երևացին, սկսեց խոր գլուխ տալ, և հարիւրաւոր կրծքերից թնդացին։

—Թող Աստուած օրհնէ մեր Մամքան Թագուհուն, մեր աղէկ տիրուհուն. Թող Աստուած նրա գլխից պակաս չանէ մեր հզօր իշխանին՝ Ջալալ-Դօլային. Թող երկուսն էլ մի բարձի ծերանան։

Թագուհին դեռ ևս երիտասարդ էր, մօտ 30 տարեկան. գեղեցիկ, բարձրահասակ, նրբակազմ, իբրև նոճի, սևաթոյր մազերով, կամարակապ յօնքերով, պայծառ և ջինջ աչքերով, լայն բաց ճակատով։ Մի թափանցիկ սպիտակ քօղ իջնում էր նրա գլխից մինչև ոտքերը, և քօղի միջով կարելի էր նկատել, որ նրա կրծքի դեղին մաւէ շապիկը, ընդելուզված մարգարիտներով և գոհարներով, կրում էր միևնոյն ժամանակ մի մեծ ադամանդակար խաչ։

—Թող առաջ գայ սուրհանդակը,—արտասանեց Թագուհին, բարձրացնելով քօղը երեսից, որի վրա ընկաւ խարոյկների արձակած աղօտ լոյսը։

—Սուրհանդակը, սուրհանդակը,—պոռացին ամեն կողմից։

Մօտեցաւ մի զինուորական, սաղաւարտը գլխին, զրահ հագած, թուրը մէջքին, և, վերցնելով սաղաւարտը, չոքեց Թագուհու առաջ, որ ճանաչեց իր ամուսնու թիկնապահին։

—Այդ դու ես, սիրելի Գուրգէն,—ասաց Թագուհին,—վեր կաց և պատմիր շուտ՝ ինչ բարի համբաւ ես բերել։

—Թագուհի, իմ տէրս և իշխանը հրամայեց ինձ վազեցնել ձիս և գալ աւետել քեզ և ամբողջ ժողովրդին, որ, շնորհիւ մեր սուրբ Գանձասարի զօրութեան, մեր անհաւատ թշնամիները նկուն են եղել և իշխանը ահագին աւարով և անհամար գերիներով վերադառնում է։ Իշխանը այժմ բանակ է դրել Թարթառի ափին և մեծ փափագ ունէր վաղը թաթախումը այստեղ կատարել, բայց բարւոք համարեց իր ամբողջ բանակով յաղթական մուտք գործել կիրակի առաւօտեան և շնորհաւորել Քրիստոսի յարութիւնը։ Նա պատուիրեց մատաղի մեծ պատրաստութիւն տեսնել զօրքի համար, որ կը թաթախվի կիրակի առաւօտեան։

— Գուրգէն, դու կը ստանաս ինձանից այն պարգևը, որ ամենից շատ թանգ է քեզ համար,—ասաց Թագուհին, համբուրելով իր ազգական երիտասարդ թիկնապահի ճակատը։

Երիտասարդ զինուորականի դէմքը փայլեց անսահման ուրախութեամբ։ Նոյն ուրախութեամբ փայլեց և Թագուհու նաժիշտներից մէկի դէմքը, որ շտապեց երեսի քօղը աւելի ամուր փակել, որպէսզի ոչ ոք չը նկատէ իր կարմրատակելը։

— Թող քաղաքապետը առաջ գայ,—հրամայեց Մամքան Թագուհին։

Եպիսկոպոսի կողքին կանգնած մի պատկառելի ծերունի մօտեցաւ Թագուհուն և համբուրեց ձեռքը։

— Խօջա Սաֆար,—ասաց Թագուհին,—ես և ամբողջ իմ տունը վաղը երեկոյեան թաթախում չենք կատարի. մենք ծոմ կը պահենք և Զատկի առաւօտը, վաղ, իշխանի և զօրքի հետ միասին մատաղով կը թաթախվենք։ Կարգադրիր, որ ոչխարներ զենվեն և առատ մատաղ, կարմիր ձու, գաթա և կաթնահունց պատրաստեն զօրքի և հիւրերի համար։

— Մենք ևս, մենք ևս չենք թաթախվի,—պոռաց ամեն կողմից ժողովուրդը.—մենք ևս ծոմ կը պահենք և կը թաթախվենք մատաղով։

—Այժմ գնանք, Գուրգէն, պալատ,—ասաց Թագուհին,—և դու կը պատմես ինձ մանրամասնօրէն ձեր ամբողջ արշաւանքը։

— Թագուհի, ներեցէք ինձ,—պատասխանեց երիտասարդ զինուորականը,—ես դեռ մի կարևոր յանձնարարութիւն ունեմ կատարելու. իշխանը հրամայել է, որ քաղաքապետը կախաղաններ կանգնեցնէ մեծ հրապարակի վրա...

— Կախաղաններ,—ընդմիջեց Թագուհին սարսռալով,—և ում համար։

— Այն անօրէն թաթարների համար, որոնց իշխանը գերի է բռնել և որոնք այնքան նախճիրներ գործեցին մեր դժբաղդ երկրում։

— Ոչ, ոչ,—ասաց Թագուհին,—Զատկի օրը, Փրկչի յարութեան օրը ես չեմ կարող թոյլ տալ կախաղաններ։ Ահա սրբազան հայրն էլ նոյնը կասէ։

— Մեր կրօնի և եկեղեցու անօրէն թշնամիներին, մեր եկեղեցիները, վանքերը, տները քանդողներին և կործանողներին կախելը մեղք չէ։ Նրանք ստանում են իրանց գործած ոճիրների վարձը։

Թագուհին գլուխը խոնարհեցրեց կրծքին. ապա բարձրացրեց գունատ դէմքը և ասաց կտրուկ կերպով.

— Թող կախաղանները բարձրացնեն քաղաքից դուրս, մեծ խրամատի ետևում, եթէ այդ անհրաժեշտ է։

II

Ամբողջ աւագ շաբաթ օրը Վաճառ աւանը յուզալից և տենդոտ իրարանցումի մէջ էր։ Ամեն մի տան երդիկից ծուխը բարձրանում էր քուլա-քուլա. ամեն մի տան մէջ պատրաստութիւններ էին տեսնվում, ամեն մի տան առաջ մի քանի գառն, ոչխար էին կապված, մատաղացու։ Մայրերը սրտատրոփ սպասում էին իրանց զաւակներին, քոյրերը՝ եղբայրներին, աղջիկները իրանց սիրած նշանածներին, կանայք իրանց ամուսիններին, որոնցից բաժանված էին մի ամբողջ տարուց ի վեր։ Եւ մանաւանդ անորոշութիւնը, կասկածը, թէ սիրելին կարող է ողջ մնացած չը լինել, վիրաւորված կամ հաշմանդամ եղած լինել, թաթարների նետերին և սլաքներին զոհված լինել,—խորին հոգեկան յուզմունքի մէջ էր ձգում սպասողներին։ Տանտիկինները շտապում էին շուտով վերջացնել բոլոր պատրաստութիւնները, մածուն մերել, կաթնապուր եփել, ձու ներկել, կաթնահունց և գաթա թխել, որպէսզի ջահել աղջիկներին և հարսներին կարողանան զուգել և եկեղեցի տանել։ Պատանիները գնացել էին դաշտ՝ զինավարժութիւններ կատարելու։

Վերջապէս կոչնակը խփեց. ս. Ստեփաննոս եկեղեցում ժամասացութիւնը սկսվեց, և տներից աղջիկները, հարսները շարան-շարան, թանձր քօղերով պատված, դիմեցին տաճարը։ Բակում արդէն խմբված էին պատանիները և նշանած երիտասարդները, տօնական զգեստներով և զինավառված. ամեն մէկը իր սրտի հաւնին էր որոնում կամ սրտի եար էր ընտրում։ Ամօթխած աղջիկները, իրանց վրա սևեռած զգալով իգիթների և ջահել-ջիւանների նայուածքը, աւելի ևս կարմրում էին և քօղի ներքոյ ծածկում իրանց հոգեկան խորին յուզմունքը։

Մամքան Թագուհին արդէն վաղուց իր նաժիշտներով կանգնած էր վերին աւանդատան մէջ, իշխանական յատուկ խորանում, և ջերմօրէն աղօթում էր։ Նախորդ գիշերին, երբ նա պալատ գնաց և մտաւ իր ննջարանը, չը կարողացաւ քնել. մինչև լուսաբացին աչքերը փակեց և մի տարօրինակ երազ տեսաւ. մի ծերունի, բոլորովին ճերմակ, ճգնաւորի զգեստով, խոժոռ հայեացքով անիծեց Ջալալին այն րոպէին, երբ սա մօտենում էր իրան գրկելու և կանգնել էր իրան և ամուսնու մէջ տեղ։ Թագուհին ճիչ արձակելով զարթնել էր, և թէև ուրախ էր, որ երազ էր տեսածը, բայց ամբողջ օրը հոգեկան մի ճնշումն ունէր և մի տեսակ նախազգացումն, թէ ինչ-որ մի դժբաղդութիւն է պատահելու։

— Ով Տէր Յիսուս Քրիստոս,—անդադար մրմնջում էին նրա շրթունքները,—անցուր իմ Ջալալի և իմ գլխից փորձանքը։

Ուղիղ ժամանակին ժամուկները ուրախութեան աղաղակներով դուրս վազեցին եկեղեցուց և կարմիր ձուերի խաղ սկսելով՝ սկսեցին ճաշակել։ Հասակաւորները նախանձով նայում էին նրանց, բայց ոչ ոք չը համարձակվեց դրժել ուխտը, և Վաճառ աւանում ամենքը Զատկի ճրագալոյցին՝ թաթախման երեկոն, ժամով անցկացրին սպասելով առաւօտեան մեծ մատաղին և ողջակէզին։

Կէս գիշերին մօտ եկեղեցու բակում խարոյկները և մաշալաները վառվեցին, քահանաները սկսեցին օրհնել աղը, վերակացուները հրամայեցին այդ աղը ուտեցնել ոչխարներին, ահագին կաթսաները դրվեցին բակի մի կողմում սարքած օջախների վրա և մի քիչ յետոյ սկսվեց ոչխարների և անմեղ գառների զենումը։ Մի ուրիշ կողմից բեռնաւորված ջորիները թաժա թխած հաց էին բերում մատաղը փաթաթելու համար։

8) Բագուից, Իսրայէլ Գ. Մէլիք-Փարսադանեանի ձեռքով հանգանակված, Սամսոնբէկի հարսանիքին՝ 44 ր.։

—

ԹԻՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք 1) Զուրզունա գիւղից (Կարսի շըրջան) Յովհաննէս Ս. Մնջեանի ձեռքով խնճոյքում հանգանակած՝ 25 ր. 40 կ., 2) Պավլադօրսկ կայարանից, Լ.-ից՝ 15 ր., 3) Թիֆլիսում, եղբարք Հախվերդեանների՝ 3 ր., 4) Բագուից, Իսրայէլ Գ. Մէլիք-Փարսադանեանցի ձեռքով հանգանակված, Ղափանի Բեխ գիւղում, Սամսոն-բէկ Մէլիք-Փարսադանեանցի հարսանիքին՝ 45 ր., 5) Թիֆլիսում, հին-Նախիջեւանցի Վարդան Պօղոսեանից՝ 20 ր.։

—

Ստացանք Սամսոն-բէկ Մէլիք-Փարսադանեանցի հարսանեաց հանդէսին հանգանակած ի նպաստ հայ բեմի ֆոնդի՝ 15 ր.։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Մշակի» հետեւեալ համարը լոյս կը տեսնի հինգշաբթի, ապրիլի 17-ին։

◆ Կովկասի Փոխարքան ապրիլի 8-ին քննել է կովկասեան զինուորական շրջանի տեղագրական պլանները։

◆ Թիֆլիսի քաղաքային երկու գիշերային ապաստարաններում Թաթախում սարքելու համար Կովկասի Փոխարքան նուիրել է 150 րուբլի։

◆ Կովկասեան 2-րդ զօրաբանակի հրամանատար գեն.-ադիւտ. Պ. Միշչենկօն վերադարձաւ դէպի Երեւանի նահանգը և Կարսի շրջանը կատարած ճանապարհորդութիւնից։

◆ Ապրիլի 9-ին, Թիֆլիսում, իշխան Գրուզինսկու նախագահութեամբ կայացաւ կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան ժողովը, որ նուիրված էր նոր պրեզիդիումի ընտրութեան։ Նիստը բանալով, նախագահը ժողովին կարդաց ընկերութեան կանոնագրութեան համապատասխան յօդուածները, որից յետոյ ձեռնարկվեց թերթիկների գրութեան, իսկ յետոյ դրանց քուէարկութեան։ Ընտրվեցին ընկերութեան նախագահ՝ իշխան Գրուզինսկի, փոխ նախագահ՝ Ա. Վերմիշեան, խորհրդի անդամներ՝ պ. պ. Սօկոլօվ, Փիրալեան, Տիմօֆէեվ և Ըլխիլաձէ։ Ընկերութեան նորընտիր պրեզիդիումը նիստ կը գումարի տօներից յետոյ, գանձապահի և քարտուղարի թեկնածութեան հարցի մասին խորհրդակցելու համար։

◆ Թիֆլիսում, Սօլօլակի տօնէլը մինչև ապրիլի 10-ը հարաւային կողմից փորվել է 21 սաժէն, իսկ հիւսիսային կողմից 49 սաժէն։ 49-րդ սաժէնի վրա ժայռի ճեղքուածից բացվել է սառնորակ աղբիւր, որի ջուրը շատ համեղ է։ Այդ ջուրը մտադրութիւն կայ մատակարարել Բէհբութեան փողոցի բնակիչներին։

◆ Ստացանք «Տարազ» շաբաթաթերթի և «Աղբիւր» ամսագրի զատկական համարները։ Նկարների մէջ կան հանգուցեալ Արփիարի, Րաֆֆիի և Լէօի պատկերները։ Միաժամանակ զետեղված են և Համբարձում Հախումեանի և տիկին Մարիամ Հախումեանի պատկերները։ Տպված են շքեղ, գեղեցիկ թղթի վրա, և միայն զարմանալ կարելի է, որ հրատարակիչ-խմբագիրը, առանց բաժանորդներ ունենալու, կարողանում է, առանց յուսահատվելու, առաջ տանել այդ թերթերի հրատարակութիւնը։

◆ Ստացանք Լ. Բաբայեանի «Լէօ (Առաքել Բաբախանեան) կենսագրական ակնարկ նրա 25-ամեայ յոբելեանի առիթով» բրօշիւրը, որի նպատակն է ծանօթացնել հայ հասարակութեանը այդ գրողի կենսագրութեան հետ։ Առ այժմ հարկ ենք համարում յայտնել, որ կազմողը թոյլ է տուել իրան, գուցէ թելադրված իրան հաղորդած անճիշտ տեղեկութիւններից, մի քանի խոշոր սխալներ, որոնց մասին մենք կը խօսենք յարմար առիթով։

◆ Վերջին ժամանակներս Թիֆլիսում բծաւոր տիֆը համարեա դադարել է և ներկայումս քաղաքային բծաւոր տիֆային հիւանդանոցում գտնվում են ընդամենը 11 հիւանդներ, որոնք ապաքինման ճանապարհի վրա են։

◆ Քութայիսի գեն.-նահանգապետ Սլավօչինսկին միջնորդութիւն է յարուցել երկրագործութեան մինիստրի Կովկասի լիազօրի առաջ, որ 1 վագօն բամբակի սերմ յատկացվի Քութայիսի նահանգի համար, որովհետև անցեալ տարի, յորդառատ անձրևների պատճառով, բամբակը չը բուսաւ և այժմ սերմի մեծ պակասութիւն է զգացվում։

◆ Թիֆլիսի նահանգական ատեանը որոշել է՝ 1) Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութեան բողոքագիրը՝ Թիֆլիսի Դումայի որոշման դէմ (1905 թ. գարնանը, ծառայողների գործադուլի ժամանակ, էլեքտրաքարշի երթեւեկութիւնը դադարեցնելու համար) թողնել անուշադիր, յայտարարելով որ այդ վէճը լուծելու է քաղաքացիական դատարանը. 2) Թիֆլիսի դումայի 1908 թ. յունվ. 9-ի որոշումը՝ հիմնել Թիֆլիսում «աշխատանքի բորսա»—բեկանել. 3) Գորի քաղաքի լիազօրների վճիռը Գորիում վաճառվող մսի սակագինը բարձրացնելու մասին—հաստատել, նշանակելով սակագինը մինչև մայիսի 10-ը. 4) Թիֆլիսի արհեստանոցների ծառայողների նօրմալ հանգիստը որոշելու պարտադիր կանոնների նախագիծը, որ կազմել է Թիֆլիսի դուման, չը հաստատել, նկատի առնելով որ շատ կէտեր օրէնքի հետ անհամապատասխան են և այլն։

◆ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը ընդունում է նուիրատուութիւններ իր գրասենեակում (Երևանեան հրապարակ, տուն № 7) Զատկի տօների առիթով։ Նուէրները կարող են լինել փողով, շորով և մթերքներով։ Ընկերութեան դիմող թշուառների թիւը շատ մեծ է, իսկ միջոցները շատ սահմանափակ. թող բարեսիրտ և ունևոր անձինք յիշեն իրանց պարտականութիւնը և այս տօներին գէթ թեթևացնեն թշուառների դրութիւնը իրանց առատ նուիրատուութիւններով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Ապրիլի 10-ին, առ. ժամը 11-ին, Նորաշէնի փողոցում թեթև կերպով վիրաւորել են 17-ամեայ օրիորդ Աննա Յովհաննիսեանին. վիրաւորող ախալցխացի Թադէոս Բօյեաջեանը ոստիկանութեան միջոցով ձերբակալված է։

◆ Ապրիլի 10-ին, երեկ. ժամը 9-ի մօտերը, Միքայէլեան փողոցում, անյայտ չարագործներ վիրաւորում են թիֆլիսեցի Միխայիլ Մարգ. Բէկ-Անտօվին և Թիոնէթի գաւ. բնակիչ Լադէ Զարիձէին։

◆ Նոյն օրը, երեկ. ժամը 5-ին, Նախալօվկայում, Մագիստրալնի փողոցում, Բիսարիօն Գիգինշվիլին մտնում է Իօսիֆ Բիբլաուրու բնակարանը և մահվան սպառնալիքով պահանջում է 400 րուբլի յեղափոխական նպատակների համար։ Բիբլաուրին հրում է Գիգինշվիլուն փողոց, ուր վերջինս քար է վերցնում և ճեղքում Բիբլաուրու գլուխը։ Վրա հասած ոստիկանը ձերբակալում է նրան։

◆ Նոյն օրը, առաւօտեան, Միքայէլեան փողոցում № 97-99, Տէր-Յակոբեանից շանտաժիստները մի նամակով պահանջում են 200 րուբլի։ Ոստիկանութիւնը ձերբակալում է նամակ բերողներին, որոնք են-Քութայիսի գաւառի բնակիչներ՝ Վասիլի Ռավիշվիլի, Իվան Կարթավա և թիֆլիսեցի Ալէքսանդր Ուզբաշեվ։

◆ Նոյն օրը, երեկ. ժամը 9 և կէսին, Էկզարխի հրապարակում մի քանի հոգի կրակում են մի անգամ թէլաւեցի Ալէքսանդր Րօստոմովի բնակարանի առաջ և պատշգամբում կանգնածներին սպառնում են վճարել այն 500 րուբլին, որ նրանք մի շաբաթ առաջ պահանջել են նամակով։ Ձեռք առած միջոցների շնորհիւ ձերբակալված են Թադ. Մեսրխվէլի և թիւրքահպատակ Վահան Կարապետեան։

◆ Ապրիլի 9-ին, ցերեկվայ ժամը 4-ին, Դիդուբէում, Շերեմետեվսկի և Զուգդիդսկի փողոցների անկիւնում, ատրճանակի երկու հարուածներով սպանել են անդրկովկասեան երկաթուղիների դարբին Պեօտր Պարեցկուն։

◆ Ապրիլի 9-ին, Թիֆլիսում, ցերեկվայ ժամը 3 և կէսին, Հալաբարում, Լազարեվսկի փողոցում ատրճանակով անյայտ անձինք մահացու կերպով վիրաւորել են նախկին թաղական վերակացու Միխայիլ Օվչինիկովին։ Կասկածով ձերբակալված են մի քանի մարդ։

ՌՈՒՍԱՑ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՃԱՌԻ ԱՌԻԹՈՎ*)

—

Արտաքին գործերի մինիստրի ճառից յետոյ խօսում է Աջեմեանը։ Հռետորը գտնում է, որ մինչև 1908 թիւը պետական նախահաշիւը կազմողները շատ քիչ էին հաշւի առնում Ռուսաստանի ներքին կեանքի փոփոխվող պայմանները, սակայն 1908 թւի նախահաշւի մէջ շատ սխալներ և անյաջող տեղեր, որոնք իբրև ժառանգութիւն մնացել էին հին կարգից, ուղղված են, բայց և այնպէս մինիստրական մեքենայի մէջ դեռ կան ահագին թերութիւններ, որոնք հնարաւորութիւն չեն տալիս մինիստրին ասել, որ նա իր ձեռքի տակ կատարեալ մեխանիզմ ունի ի կատար ածելու նրա ցանկութիւնները և ճշտութեամբ լուսաբանելու և մշակելու բոլոր հարցերը։

«Ի հարկէ, մեր դիպլօմատիան մեր պայմաններում—արտաքին և ներքին—ահագին նշանակութիւն ունի և յատկապէս այժմ։ Կայսրութեան աչքերը առանձնապէս այժմ պէտք է սրատես լինեն, որովհետև այժմ, աւելի քան երբևիցէ, ցանկալի չեն բարդութիւններ, ինչ տեսակի էլ որ դրանք լինեն։ Արտաքին գործերի վարչութիւնը այդ իսկ պատճառով պէտք է լաւ կազմակերպված լինի։ Ի նկատի ունենալով, որ վարչութիւնը ներկայ դէպքում զգայուն կերպով լսեց հասարակական կարծիքը, թէկուզ յանձին Դումայի, և նկատի առնելով, որ այդ զգայութիւնը կանգ չի առնի, այլ առաջ կընթանայ, մեզ մնում է հաւատ յայտնել, որ միայն այն վարչութիւնն ուժեղ կը լինի միջազգային յարաբերութիւնների մէջ, որպիսին կը համակերպվի երկրի ներքին ձայնին։

«Արտաքին գործերի մինիստրութեան հին և յոգնած օրգանիզմի վերակազմութիւնը առաջին անհրաժեշտ քայլն է վարչութեան արտաքին աշխատանքների աջողութեան ճանապարհին։

«Պէտք է միայն ցանկանալ, որպէսզի առաջայում մենք, իբրև կազմակերպված հասարակական կարծիքի ներկայացուցիչներ, ձայն ունենանք արտաքին գործերի շրջանում, բոլորովին պարզ և հրամայողական ձայն»։ (Ծափահարութիւններ)։

Միլիւկօվը գտնում է, որ «մինիստրը մատնանշեց երկու բառեր՝ ռուս սրտի զգայուն լարերը և առողջ էգօիզմը, որոնց միջև, իրաւի, պէտք է պտտվի բալկանեան քաղաքականութիւնը և որոնց միջև նրան միշտ չէ աջողվել կանոնաւորապէս ղեկավարվել։

«Դէպի Բալկանեան թերակղզու սլաւօն ազգութիւնները մենք ոչ միայն որոշ արտաքին վերաբերմունք ենք տածում, այլև նրանց վերաբերութեամբ բարոյական պարտականութիւններ ենք զգում մենք մեր մէջ։ Միւս կողմից միանգամայն պարզ է, որ այդ բարոյական պարտականութիւնները կատարելու համար մենք չենք կարող զոհ բերել մեր սեփական շահերը, և յանուն մեր առողջ էգօիզմի մենք պէտք է յիշենք այն սահմանները, որոնց մէջ մենք կարող ենք ազատօրէն գործել Բալկանում։

«Առողջ էգօիզմը, անշուշտ, քաղաքականութիւն է, ինչպէս ինքը մինիստրն ասաց, լիակատար անկողմնապահութեան և անշահամոլութեան քաղաքականութիւն Բալկանում, սակայն մեր էգօիզմը Բալկանում միշտ առողջ չէ եղել, միշտ չէ շրջափակվել անշահամոլութեամբ։ Րօպէ է եղել, երբ մեր ձեռքով ազատութիւն ձեռք բերած սլաւօնները պատրաստ են եղել կասկածել, որ մենք ցանկանում ենք հէնց նոր ազատված երկիրը Դանուբեան նահանգ դարձնել։ Եթէ մեծ պետութիւնները այն ժամանակ հաւատային մեր անշահամոլութեան, Սան-Ստեֆանօյի դաշնագրութիւնը չէր խճճվի, բօլգարները մեզ չէին մեղադրի, թէ ձգտում ենք երկիրը ռուսացնել, և մենք էլ առիթ չէինք ունենայ մեղադրել բօլգարներին, թէ երախտամոռ գտնվեցին դէպի իրանց ազատարարները։ Մենք այն ժամանակ առողջ էգօիզմի քաղաքականութիւն չէինք վարում և այդ պատճառով էլ ազատարարներից մենք դառանք ճնշողներ և թոյլ տուինք մեր մրցակից Անգլիային բօլգարների հովանաւորողի և փրկչի դերի մէջ մտնել։

«Աւստրիայի հետ մեր կապած համաձայնութեան հետևեալ շրջանը բնորոշվում է թերևս առողջ էգօիզմով Բալկանեան թերակղզու վերաբերութեամբ, սակայն անառողջ՝ առհասարակ մեր ներքին քաղաքականութեան համար։ Մենք կրկին չը գտնվեցինք Բալկանում ամենահարկաւոր րօպէին, և այն ույժերը, որոնք գործադրվելով գործնական գնահատելի արդիւնքներ կարող էին տալ, 1903 թւականի ջղաձգական պայթումի շարժառիթը դարձան միայն։

«Միւրցշտէգեան համաձայնութեան մէջ անշահախնդիր մնացինք միայն մենք, իսկ պայմանագրի մեր ընկերները միայն շահեցին։ Ժողովուրդների թշնամութիւնը միւրցշտէգեան դաշնագրութեան անյաջողութեան պատճառը չը դարձաւ բնաւ, այլ միայն նրա հետևանքը։ Մակեդօնիայում ուժեղ բօլգար տարրի թուլանալը արգելք եղաւ մեզ ըղձալի աւտօնոմ Մակեդօնիա ստեղծել։

«Բալկանում մեր յարաբերութիւնների յաջորդ աստիճանը այն փորձերի դարագլուխն է, որոնք բղխում էին միւրցշտէգեան համաձայնութիւնից։ Մի շատ աննշան գործնական բան ձեռք ձգելով Մակեդօնիայի համար, նրանք Մակեդօնիա մտցրին մեր քաղաքակիրթ ռուս և աւստրիացի գործակալներին, ժանդարմերիայի կազմակերպութիւնը և այլն։ Սկիզբը դրված էր և կախված էր օդում, մինչև որ մենք երես առ երես չը հանդիպեցինք աւստրիական երկաթուղագծի հարցի հետ։

«Հազիւ թէ կարելի է այդպէս հանգիստ կերպով, ինչպէս արտաքին գործերի մինիստրը, հաշտվել մեզ մրցակից մեծ պետութիւնների աջողութեան հետ։ Մեր դիպլօմատիան անկարող եղաւ բարօն Էրենտալի դիպլօմատիական փայլուն աջողութեան առաջն առնել։ Բայց հէնց որ մենք այդ պատեհ րօպէն կորցրինք, մինիստրութիւնը իսկապէս ընտրեց մեր անաջողութիւնը ծածկելու միակ կանօնաւոր միջոցը։ Մինիստրութեան քայլերը իսկապէս համեմատաբար փայլուն ելք էին տուած դրութիւնից։ Ի զուր են ասում, թէ Աւստրիան միայն տնտեսական շահեր է որոնում սանջակի երկաթուղագծից. դա նշանակում է աչքերը փակել հետևանքների առաջ։ Միայն սանջակի երկաթուղագծի կառուցումը որոշ չափով փոփոխութիւն է մտցնում միջազգային դրութեան մէջ. սանջակի երկաթուղով Աւստրիան իր ձեռքը կը ձգէ դէպի Հնդկաստան տանող ցամաքային ճանապարհը, որով հաւանօրէն կարող է ընթանալ անգլիական պօստը, անցնելով հին-իտալական ճանապարհը։

«Դիմելով մեր այժմեան բանակցութիւններին Անգլիայի և միւս մեծ պետութիւնների հետ այն առաջարկութեան առիթով, որպիսին այդ մեծ պետութիւնները միասին մտադրված էին անել Բ. Դրան, ռուս մինիստրութիւնը միանգամայն իրաւացի ստեղծեց իր հականախագիծը անգլիականի դէմ։ Մինիստրը պէտք է աւելի բնորոշէր ռուսաց նախագիծը, որպէսզի նա աւելի ընդունելի լինի բալկանեան սլաւօնների համար, որպէսզի նրանք հասկանան, որ նա իր մէջ րէալ և լուրջ բովանդակութիւն է պարունակում։ Մեր ձայնը Բալկանում այլ կերպ է հնչվում, քան անգլիական դիպլօմատների ձայնը։ Անգլիան, աջող դիրք ընտրելով, ոչինչ չէ կորցնում. ընդհակառակը, շահում է և եւրօպական հասարակական կարծիքի համար հանդիսանում է հեռատես առաջարկութեան նախաձեռնող ընդարձակ չափով, մինչ Ռուսաստանը կորցնում է նոյնը, թէև աւելի պակաս չափով։ Ռուսաստանը պարտաւորված է, որ այժմեան րօպէին, այստեղ, բալկանեան քաղաքականութեան մասին ասած մեր իւրաքանչիւր խօսքից արեան հոտ է փչում։ Հարկաւոր է միայն փոքրիկ յոյս ներշնչել մակեդօնական ազգաբնակութեան և դրանով կրկին նոր պայթում առաջացնել։

«Ահա ինչու մենք մեր առաջարկութիւնների մէջ պէտք է առանձնապէս զգոյշ լինենք և առաջարկենք միայն այն, ինչ ընդունելի է։

«Այդ տեսակէտից մեր ռուսական նախագծի դիրքը վերին աստիճանի յարմար է և բարեյաջող։

«Եւ ահա այժմ, թւում է, հասնում է ռուսաց քաղաքականութեան համար այն վայրկեանը, երբ պէտք է ցոյց տրվի, որ կատարելով այն բոլորը, ինչ որ հարկաւոր էր առողջ էգօիզմի յաղթանակի համար, մենք կարող ենք որևէ բան կատարել և մեր ազգակիցների համար։ Ռուսական նախագծում կայ այն առողջ հատիկը, որ Մակեդօնիայի բարենորոգումը դնում է այն կանօնաւոր ճանապարհի վրա, որով ընթանալով մենք վերջի վերջոյ, շատ կարելի է, կը հասնենք անգլիական առաջարկութեան, սակայն կը հասնենք առանց բարդութիւնների։

«Խօսելով Մերձաւոր Արևելքի մասին, մենք չը պէտք է նկատի ունենանք միայն Բալկանեան թերակղզին։ Բալկանում դրութիւնը պարզ է։ Սակայն կայ մի շրջան, որ ծածկված է թանձր վարագոյրով. նրա ետևում կատարվում են այնպիսի պատահարներ, որոնք աւելի պակաս կարևոր են մեզ

---

*) Տես «Մշակ» № 79

Սկսվեց մատաղի պատրաստութիւնը։

III

Կիրակի, Զատկին, արշալոյսը դեռ չէր բացվել, որ ամբողջ աւանը ահագին շարժման մէջ էր։ Մեծ, պստիկ, հասակաւոր, մանուկ, աշխարհական, եկեղեցական, պառաւ և ջահել կանայք շտապում էին դէպի քաղաքի մեծ դուռը, խրամատի մօտ, դիմաւորելու իշխանին, փրկչին, իրանց սիրելիներին, և ողջունելու նրա յաղթական մուտքը, տեսնելու գերիներին, որոնց կախաղան պէտք է բարձրացնէին, և ստանալու իրանց բաժին աւարը։

Մեծ դարբասի առաջ Մամքան թագուհին, շրջապատված իր նաժիշտներով և սպասաւորներով, ծիրանի պատմուճանի մէջ փաթաթված, ապարօշ գլխին դրած, մանուշակի փունջ ձեռքին, սպասում էր և անհամբեր նայում դէպի դաշտը։ Հոգևորականութիւնը, գլուխ ունենալով եպիսկոպոսին, զգեստաւորված, խաչ ու խաչվառով, կանգնած էր դարբասից դուրս։

Արշալոյսը նոր էր տարածել իր վարդագոյն շղարշը մօտակայ սարերի վրա, երբ յանկարծ լսվեցին ձայներ՝ «գալիս են, գալիս են»։

Եւ երիտասարդները, պատանիների խմբեր վազեցին դէպի դաշտը, դէպի մեծ արահետը, որի երկու կողմերին մի քանի կառափնարաններ էին կանգնեցրած, սարսափ և ահ ազդելով դիտողների վրա։ Շուտով երևացին առաջապահ գնդերը. առաջ գալիս էին իրանց ձիերի վրա նստած ռազմիկները, յետոյ նիզակաւորները, ապա աղեղնաւորները, ձիերի երկու կողմերից կախած ունենալով կապարճներ, լի նետերով և սլաքներով։ Նրանց հետևում էին ամբողջովին զրահաւորված և զինաւորված երիտասարդ թիկնապահներ, որոնց ոսկեզօծ սաղաւարտները շողշողում էին արևի առաջին ճառագայթների ներքոյ. ապա սուրհանդակները առաջնորդում էին իշխանական նշանները մետաքսագործ ծածկոցներով, որոնց վրա ասեղնագործված էին Ջալալեան տոհմի զինանշանները։ Հուսկ յետոյ գալիս էր համակ սպիտակ նժոյգի վրա նստած Ջալալ-Դօլա իշխանը, Խաչէնի տէրը, մի պարթևահասակ, առոյգ, գեղեցկադէմ և աշխոյժ տղամարդ, որի դէմքը այդ րօպէին, ի տես դարբասի վրա կանգնած գմբէթի, փայլեց ցնծութեամբ. Կողքից կախ ընկած գոհարներով ընդելուզված թուրը աչքի էր ընկնում իր խոշոր յակինթների և զմրուխտների քանակութեամբ։ Իշխանի ետևից անմիջապէս մի թիկնապահ բերում էր նրա վահանը և աղեղը։

Ի տես իշխանի և նրա սպիտակափայլ ռազմիկ նժոյգի, հազարաւոր աղաղակներ թնդացին օդում.

— Ապրի իշխան Ջալալ-Դօլան, փառք իշխան Դօլային։

Ապա լսվեցին նախ զսպված, յետոյ աղեկէզ սրտայոյզ աղաղակներ.

— Գերիները, գերիները, թաթարները. անիծեալներ, նզովից որդիներ։

Եւ անհամար բռունցքներ ճօճվում էին օդի մէջ, սպառնալիքներ ուղղվում էին դէպի մի խումբ շղթայակապ գերիներ, որոնց բերում էին դահիճները անմիջապէս թիկնապահներից յետոյ, իբրև պատերազմական տրօֆէներ, իսկ նրանց հետևում էին հարիւրաւոր սայլեր, բեռնված ամեն տեսակ աւարով. ապա գալիս էին ձիերի երամակներ, արջառների հօտեր և բոբիկ, կիսամերկ խառնիճաղանճ ամբոխի մի ահագին բազմութիւն, որոնց մէջ տղաներ, կանայք, պառաւներ և ծերեր։ Դրանք նոյնպէս աւարներ էին, թշուառ բնակիչները այն գիւղերի և աւանների, որոնք ենթարկվել էին իշխան Դօլայի զօրքի յարձակման։

Ամենից շատ ուշադրութիւն էին գրաւում և ժողովրդի անէծքին արժանանում թաթար գերիները, մեծագլուխ, անմօրուս, նեղաչուի, տափակ-քիթ, կարճոտն։ Հիւծված, յոգնած երկար ճանապարհորդութիւնից, հետիոտն, որին նրանք անսովոր էին, նրանց առանց այն էլ դալուկ դէմքը մեռելային գոյն էր ստացել ի տես կախաղանների, որոնց նշանակութիւնը նրանք շատ լաւ հասկանում էին։ [illegible] մետաքսագործ երկար խալաթները արդէն ցնցոտիներ էին դարձել։

Իշխանը մօտենում էր դարբասին։

Յանկարծ թնդաց սարկաւագի զիլ ձայնը՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։ Եպիսկոպոսը մօտեցաւ իշխանին, որ արդէն իջել էր նժոյգից և սաղաւարտը վերցրած, դիմում էր դէպի նրան, ընդունելու և ճաշակելու փայտեայ մատուցարանի մէջ դրած զատկական մատաղը. նա, վերցնելով պատառը, զօրեղ ձայնով սկսեց արտասանել՝ Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի, երբ մի նոր, օտարական ձայն ահեղ գոչմամբ աղաղակեց ժողովրդի միջից.

— Ոչ, իշխան, Քրիստոս դեռ յարութիւն չէ առել. նա դեռ տանջվում է և չարչարվում խաչի վրա բազկատարած։ Այժմ չէ Զատիկը քեզ համար։

Եւ մի ծերունի, բոլորովին ճերմակած, ճգնաւորի հագուստով, մի կոպիտ ցուպ ձեռքին, դուրս եկաւ ժողովրդի միջից և կանգնեց իշխանի առաջ։

Ի տես նրան Մամքան թագուհին գունատվեց, ճիչ արձակեց և ուշաթափ ընկաւ նաժիշտների ձեռքին։ Նախազգացումը չէր խաբել նրան. երազը կատարվում էր։ Եւ մինչ նաժիշտները ջուր էին սրսկում նրա երեսին, իշխանը մօտեցաւ ծերունի ճգնաւորին, մի րոպէ խոժոռադէմ նայեց, բայց շուտով մեղմացնելով դաժան հայեացքը, ասաց.

— Սուրբ հայր, ինչու համար արժանի չեմ զատկական գառը ճաշակելու. ինչու համար Քրիստոս այսօր յարութիւն է առել ամենքի համար, իսկ ինձ համար ոչ։

— Որովհետև քո ձեռները թաթախված են մարդկային արեան մէջ, անմեղ մանուկների և անզօր ծերերի արեան մէջ։

— Բայց ես կոտորել, սպանել եմ մեր ազգի և եկեղեցու թշնամիներին, մեր հայրենիքը, մեր օջախները քանդողներին, մեր վանքերը պղծողներին, Քրիստոսի թշնամիներին։

— Քրիստոսի համար չը կայ թշնամի. նրա առաջ ամենքը մարդ են և հաւասար. դու քրիստոնեայ ես, քեզ համար ամեն մի մարդ եղբայր և ընկեր է. այդպէս է պատուիրում Փրկիչը. իսկ դու սպանել ես քո ընկերին և եղբօրը. դու արժանի չես ներման. դու իրաւունք չունես ճաշակելու Գառը։

— Այդպէս է, սրբազան հայր,—դարձաւ իշխանը դէպի եպիսկոպոսը։

— Ոչ, իշխան, դու կատարել ես աստուածահաճոյ գործ, դու պատժել ես մեր եկեղեցու հալածիչներին, թշնամիներին. դու արժանի ես վարձի և փառաբանութեան։

— Նրա բերանով խօսում է աշխարհիկ եկեղեցին, իշխան,—ասաց ճգնաւորը,—մինչ իմ բերանով խօսում է հոգևոր եկեղեցին, ինքը աւետարանը, ինքը Փրկիչն է խօսում։ Դարձրու երեսդ դէպի այս հազարաւոր թշուառ, մերկ, քաղցած մանուկները, ծերերը, պառաւները, որոնց պաշտպանող տղամարդկանց դու կոտորել ես և նրանց գերի վարել. ինչո՞վ են նրանք մեղաւոր, այդ խեղճերը. չէ՞ որ նրանք անմեղ են։ Այն, ինչ որ նրանց հայրերն են գործել, գործել են իբրև անօրէններ, բայց քեզ, քրիստոնեայիդ, վայել չէր նոյնը գործել, անմեղների կոտորման պատճառ դառնալ։ Քեզ վայել չէ «ակն ընդական և ատամն ընդ ատաման» պատուէրը կատարել։ Յաղթիր նրանց մեծահոգութեամբ և քո խիղճդ այն ժամանակ կը գոռայ, բարձրաձայն կաղաղակէ, որ դու արժանի ես ճաշակելու զատկական Գառը, ասելով՝ Քրիստոս յարեաւ ի մեռելոց։

— Բայց ինչ պէտք է անեմ, որ արժանանամ ճաշակելու Գառը։

— Թող քո թագուհին յայտնէ քեզ այդ,—ասաց ճգնաւորը և անհետացաւ ամբոխի մէջ։

Իշխանը դարձաւ դէպի դարբասը։ Մամքան թագուհին արդէն վրա էր եկել, և, ի լուր վերջին խօսքերի, նրա գեղանի դէմքը սկսեց փայլել աննման ուրախութեամբ. մի հրեշտակային ժպիտ անցաւ նրա բոցավառ երեսի վրայով և դարբասի գլխից նա բարձրաձայն գոչեց.

— Իշխան Ջալալ-Դօլա, ազատ արձակիր բոլոր գերիներին, յետ տուր նրանցից վերցրած աւարները և ճաշակիր զատկական Գառը։

— Ապրի շնորհալի և հրեշտակ թագուհին,—որոտացին հազարաւոր ձայներ։

Իսկ մի աւելի խրոխտ, հզօր և ահարկու ձայն աւելի բարձր որոտաց.

— Այժմ է Զատիկ, իշխան, քեզ համար, ճաշակիր [illegible] համար առանձնապէս առողջ էգօիզմի տեսակէտից, զի՛ մեր Ասիական Թիւրքիան է, մեր կովկասեան-պարսկական սահմանագլուխը։

Պանթիւրքական բնաւորութիւն կրող կոնկրէտ շարժումը ուղղված է, Թերևս, առայժմ՝ հերթում ոչ ռուսական սահմանի դէմ, այլ պարսկական սահմանների և Աֆղանիստանի շրջանի դէմ։ Այդ այն շրջանն է, որ բաժանում է մեր և անգլական ազդեցութեան սֆերան և կարող է ամեն ժամանակ մեզանից անջատել Պարսից ծոցը։ Թէև մեր մարդասիրութեան զգացմունքները այստեղ աւելի պակաս չեն վիրաւորված քան Բալկանեան Թերակղզում, սակայն այստեղ ոչ պակաս իր բողոքն է ուղղում մեզ առողջ էգօիզմի մեր զգացմունքը»։ (Ծափահարութիւններ բոլոր աթոռներում)։

Այնուհետև խօսում են Կապուստին, Պոկրովսկի 2-րդ, Կրուպէնսկի, Բաշկևէվ, Բոգանով, Պուրիշկևիչ, Շիչկով, Մարկով 2-րդ, որից յետոյ վիճաբանութիւնները դադար են առնում։

Դուման ընդունում է նախագահի մասնաժողովի առաջարկած հերթական գործերին անցնելու բանաձևը և ձեռնարկում է քուէարկելու նախահաշուի ևլմտի համարներով։

Աննշան վիճաբանութիւններով, որոնց մասնակցում են Բօզանով, Նիսելովիչ, կոմս Ուվարով և Միլիւկով, արտաքին գործերի մինիստրութեան ելմուտը ընդունվում է առանց փոփոխութիւնների, խմբագրական յանձնաժողովի զեկուցագրի համաձայն։

(«Հ. Գ.»)

ԱՐՓԻԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եգիպտոսի «Լուսաբեր» Թերթում կարդում ենք հետևեալը.

«Ստորագրեալներս՝ լոնդոնահայ գաղութի շարք մը երիտասարդներ՝ որպէս ծանօթներ ու հիացողներ սղբացեալ Արփիար Արփիարեանի երեսնամեայ գրական ու հրապարակախօսական անզուգական տաղանդին ու գործունէութեան՝ մեր վշտի, զայրոյթի ու բողոքի ձայնը կը բարձրացնենք ընդդէմ այն եղեռնագործ խմբակին, որ, Վենետիկի վիժուած ոճիրէն վերջ, այնքան վատաբար սպաննեց մեծ գրագէտը Գահիրէի նման ազատ անկիւն մը ու անոր ազատամիտ ու հայրենասէր գրիչը լռեցուց յաւէտ, և կը խնդրենք Թերթիդ վարչութենէն,—որու խմբագրութիւնը կը վարէր ան վերջին ժամանակներս,—արձանագրել մեր այս ցաւակցութեան և բողոքի ձայնին ու յանձնել այդ ազգադաւ ու եղեռնապիծ ջոլիրը գիտակից հայ հասարակութեան դատաստանին։

«Մինաս Ցոլակ, Շաւարշ Գրիգորեան, Գրիգոր Աթանիկեան, Հմայեակ Ազապլարեան, Նշան Բագարատ»։

ԶԱՏԿԻ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանուկներին.—Ուրախ Զատիկ գարնան զուարճութիւններով։

Ընկերութիւններին. — Զուարճանալ ցանկացող հասարակութիւն զբօսանքների համար։

Զբօսանք կազմողներին. — Ամբողջ ապրիլ և մայիս ամիսներում պարզ եղանակ։

Գիմնազիստներին.—Նոյն ամիսներում ժամանակ առ ժամանակ կարգին անձրևներ։

Դուլասէրներին.—Անվերջ դուլեր. օրինակ՝ գինադուլ ցեխտորներին, գործադուլ ագիտատորներին, դասադուլ հալածեալներին, խնդրադուլ բարեգործական հաստատութիւններին, ընթերցադուլ խաւարամիտներին։

Կաթողիկոսական յանձնաժողովին.—Կաթողիկոսական թեկնածուների ցուցակը։

Դաշնակցականներին.—Լուծել հարցը՝ մասնակցե՞լ թէ չը մասնակցել կաթողիկոսական ընտրութիւններին։

Վերակազմեալներին.—Նորից վերակազմվել։

Զակերտաւորներին.—Զատիկ՝ դասակարգային հողի վրա։

Յօբելեարների գնդին.—Կապալառուներ յօբելեաններ սարքելու համար։

Տոլստոյականներին.—Պարզել Տոլստոյի հմայքի գաղտնիքը։

Թիւրքիային.—Անվերջ պատրուակներ պարսկական սահմանագծի վրա։

Եւրոպական կոնցերտին.—Զանազան տեսակ սրինգներ և փողեր առանց պատերազմական փողի։

Պետական Դումային. — Մարզարան մինիստրների ճառախօսութեան համար։

Տիմօշկինին.—Կովկասը առանց կովկասցիների։

Տուապսող ժողովրդին.—Շատեր սովի կործանիչ նշանակութեան մասին։

Հայ ուսուցիչներին. — Դպրոցական կանոնադրութիւն։

Գիւղացիներին.—Առայժմ «Չանասագութիւն»։

Գրականագէտներին.—Նոյնքան կանոնագրութիւն, որքան գրականագէտներ կան։

Ժողովրդական համալսարանին.—Ունկնդիրներ նաև ժողովրդի ստորին խաւերից։

Արփիարի յարգողներին. — Արփիարի երկերի ժողովածուն։

Հայ արուեստագէտներին. — Պանդխտութիւն դէպի օտար երկիրներ երկար տարիներով։

Հայ դպրոցներին.—Փշուր մը հաց։

Հայ մամուլին. — Վճարող ընթերցողներ։

Ճեմարանին.—Հետևեալ տարվայ ապահով բիւջէ։

Հայրիկեան ֆոնդին. — Խոստումների իրագործութիւնը։

Իրաւաբաններին. — Համերաշխութիւն բոլոր քաղաքացիների մէջ։

Բժիշկներին.—Հիւանդ առողջներ։

Ֆելդշերներին. — Յուսահատված հիւանդներ։

Տիկիններին և օրիորդներին.—Պատրաստութիւններ գարնան և ամառվայ համար։

Էկսպրոպրիատորներին. — Մաշված դրօշակների տեղ նորերը։

Գանձակեցիներին. — «Անմեղ մեղաւորներ» անունով մի նոր պիէս տեղական կեանքից։

Ալէքսանդրօպօլցիներին.— Եթէ ոչ պատերազմ, գոնէ պատերազմական պատրաստութիւններ առևտուրի համար։

Ագուլեցիներին.—Երկաթուղի մինչև Օրդուբաթ, հանքերի շահագործում Գողթանում և միջնակարգ դպրոց Ագուլիսում։

Վաղարշապատցիներին.—Վանքական հէքիաթների ժողովածու։

Թիւրքահայերին.—Ազատութիւն ամեն տեսակ հովանաւորներից՝ եւրոպական թէ ասիական։

Ամերիկահայերին և եգիպտահայերին.—Արփիարի և Թաւշանճեանի սպանութեան առթիւ դիմաց մի խոշոր առաքինութեան արտայայտութիւն։

Մեր ընթերցողներին. — Շնորհաւոր Զատիկ։

Վրձին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

10 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գետերը յորդացել և մեծ վնասներ են պատճառել Կալուգայում, Մոգիլևվում, Տուլայում, Ռեազանում, Նիժնի-Նովգորոդում, Մոսկվայում և այլն։

Արտաքին

9 ապրիլի

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ։ Երէկ երեկոյեան անգլիական Թագաւորը և Թագուհին Վիկտորիա պրինցեսսի հետ ժամանեցին տեղս։ Կայարանում ընդունեցին արքայական ընտանիքը և բարձր իշխանութիւնները։ Հազարաւոր ամբոխը ողջունեց Թագաւորական զոյգին։

ՎԻԵՆՆԱ։ Գիշերս յանկարծամահ եղաւ Վիեննայի համալսարանի պրոֆեսոր, յայտնի լարինգոլոգ, բժիշկ Շլէտզէր։

ԲՈՒԴԱՊԵՇՏ։ Քաղաքապետը մի ծանուցում է հրատարակել, որով հերքում է այն լուրերը, իբր թէ օտարազգիների ցուցակագրութիւնը, որ կատարվում է ներքին գործերի մինիստրի պատուէրի համաձայն, ուղղված է գլխաւորապէս ռուս գաղթականների դէմ, և իբր մայիսի 1-ին մասսայական արտաքսումներ են տեղի ունենալու։

Ծանուցման մէջ ասված է, որ կաքսորվեն միայն այն օտարազգիները, որոնք վտանգաւոր են հասարակական կարգ ու կանոնի համար կամ որոնք չեն կարողանում օրական պարէնը հայթայթել սեփական ույժերով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ
„ԵՐԿՐԻ ՁԱՅՆԸ“
№ 12 հետևեալ բովանդակութեամբ

Լաւ չը կամեցողից վատթար խուլ չը կայ, Տ. Զաւէն.—Մակեդոնական խնդրի շուրջը (Աւստրիական գծի նշանակութիւնը) Ո. Նազարէթեան.—Ինչե՞րի ընդունակ են մեր «ազգային փրկիչները» («Կարմիր խրախճանքը»), պատգամաւորներից մէկը.—Թիւրք բանակին վիճակը, II Սզակիր Օսմանցի մը.—Յոյները համագործակցութեան դէմ.—Երիտասարդ Թիւրքերի մէջ.—Մամուլի շուրջը.—Դաւաճանը (բանաստ.), Թոչեկ.—Աւստրիան ինչպէս կորզեց երկաթուղային մենաշնորհը, Ա.—Նշանակալից տեսակցութիւններ.—Կորած փաշան, զինուորական խլրտումներ։

«Երկրի Ձայնը» լոյս կը տեսնէ ամեն շաբաթ, փոխանակ, ինչպէս յայտարարված էր, երկու շաբաթը մի անգամ։ Հատը արժէ Թիֆլիսում 5 կոպէկ։ Թիֆլիսից դուրս՝ 6 կոպէկ։ 1—1

Երեքշաբթի, ապրիլի 15-ին
ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՃԷՆՔՈՒՄ
յօգուտ Խարփուխի հայոց ծխական դպրոցի աշակերտ-աշակերտուհիների
տեղի կունենայ
ՉԻՆԱԿԱՆ ՀՍԿԱՅԱԿԱՆ
ԶԲՕՍԱՆՔ

Վիճակախաղ-ալլէգրի — չինական սերվիզ ծաղկամաններ և ուրիշ Թանգագին իրեր։
Մուտքը 20 կոպէկ

Այգին զարդարված կը լինի չինական ճաշակով. չինական հոյակապ կամար, ընդօրինակած Պէկինի դռներից, քիօսկներ, Թէյարան, բուֆէտ, չինական խաղ, գուշակութիւն, մանկական խաղեր, բաղդի տակառ, պտի-շվօ (ձիարշաւ), կարթ, կոնֆէտտի, ծաղիկներ, սերպանտին և չինական հրախաղ։

ՊԱՐԵՐ

Մուտքը 25 կոպէկ, աշակ.-աշակերտուհ. 15 կ.
Սկիզբը ճիշտ ժամը 12-ին

Մանկական խաղերը տևում են մինչև ժամը 3-ը։ Զբօսանքի ընթացքում կը նուագէ անընդհատ զինուորական երաժշտական երկու խումբ։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հայ Դերասանական Ընկերութիւնը
Երեքշաբթի, ապրիլի 15-ին
պ. պ. անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար
կը ներկայացնէ
ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
դրամա 3 գ. Պշիբըշևսկու
Մասնակցում են տ. տ. Մայսուրեան, Մելիքեան, պ. պ. Ամօ-Խարազեան, Բերոյեան։
Սկիզբը ժամը 8½-ին

Ուրբաթ, ապրիլի 18-ին
Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում
Տիկին Օ. ՄԱՅՍՈՒՐԵԱՆԸ
Մի խումբ Թատրոնասէրների մասնակցութեամբ
կը ներկայացնէ հայերէն լեզուով
ԱՐԻ ԲԱԺԱՆՎԵՆՔ
կոմեդիա 3 արար. հեղ. Սարդուի

Մասնակցում են տ. տ. Վ. Ազամալեան, Հ. Աստուածատրեան, օր. օր. Ի. Քալանթար, Ն. Էմինեան, Ե. Տիգրանեան, պ. պ. բժիշկ Զարգարեան, Ա. Կուսիկեան, բժիշկ Ն. Խատիսեան, Գ. Խատիսեան, Յ. Զէյնեան, Կ. Մարգարեան։

Սկիզբն է ուղիղ ժամը 8-ին
Տեղերի գինն է 4 ր. 10 կ.-ից մինչև 1 ր. 10 կ.
Տոմսակները չեն ուղարկվելու
Տոմսակները կարելի է ստանալ Գանովսկայա փող. № 19, ԿԱՐ ու ՁԵՒԻ արհեստանոցում, իսկ ներկայացման օրը Ժողովարանում։
Րէժիսոր՝ Օ. Մայսուրեան
(Կ. Հ.) 2—1

Երկուշաբթի, ապրիլի 14-ին
Զատկի 2-րդ օրը
ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆԸ
կը կայանայ
Զատկական ժողովրդական
ԶԲՕՍԱՆՔ
Կօնցերտային բաժնով,
ազգային յայտնի պարեր
և վիճակախաղ-ալլէգրի

Վիճակ են դրված արժէքաւոր իրեր։ Կը նուագեն զինուորական երաժշտութիւնը և զուռնան։ Մուտքը դահլիճում—10 կոպէկ, համերգին 10-ից մինչև 75 կոպէկ։ (Համերգի համար տոմսակ վերցնողը մուտքի համար չէ վճարում)։

Զբօսանքի սկիզբն է ցերեկվայ 11 ժամին, կոնցերտինը—12 ժամին։

Տոմսակները ծախվում են Դանիլովի պատրաստի հագուստեղէնի խանութում (Գոլովինսկի պր.), իսկ զբօսանքի օրը—ժողովրդական տան կասսայում։ 1—1

Մարտի 31-ին լոյս տեսաւ
„ԳԵՂԱՐՈՒԵՍՏ“
Գրական գեղարուեստական երաժշտական պատկերազարդ հանդէս
Ա. ԳԻՐՔ—ՄԱՐՏ
(Բովանդակութիւնը տես «Մշակ» № 59)
Բաժանորդագրութիւնը շարունակվում է.
Տարեկան՝ (10 գիրք) 10 ր., արտասահման 40 ֆր.
Հատավաճառ 2 ռուբ. (8 ֆր.)

Խմբագրութեան հասցէն՝ Бебутовская, № 12. Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ, редакція „Гехарвестъ“. Հատով վաճառվում է և բաժանորդագրութիւն ընդունվում Թիֆլիսում նաև «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներում, ինչպէս և Սուգանաչեանի երաժշտակ. մագազինում, Բագւում «Сотрудникъ» գործակալութեան մէջ։

Խմբ.-հրատ. Գ. Լևոնեան
(օ. մ.) 5—5

ԲԺԻՇԿ
Ա. Մխիթարեանց

Ընդունում է հիւանդներին. մասնագիտութիւն՝ սիֆիլիս, միզային, վեներական և մորթու հիւանդութիւններ. առաւօտեան 12—2 ժ., երեկ. 5—7 ժ., Սօլօլակ, Բեհբութեան փողոց № 33.
(ա. օ.) 100—31

Ջրի և Էժանագին Ճաշարանների
և թէյարանների ընկերութեան կօմիտէտը սրանով հրաւիրում է ընկերութեան պ. պ. անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովին, որ տեղի է ունենալու 1908 Թի ապրիլի 17-ին, ցերեկվայ ժամը 12-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում, ընթացիկ տարվայ հաշիւը և նախահաշիւը հաստատելու համար։ Նոյն ժողովում տեղի է ունենալու նաև վարչութեան անդամների, կանդիդատների, նոյնպէս և վերստուգող յանձնաժողովի անդամների ընտրութիւնը։
(Հ. Կ.) 2—2

Զգուշացէք կեղծումներից.
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻՒՐԳԵՆՍԻ

Պեպէնների, սևութեան, դեղին բծերի, պզուկների և պալուկների դէմ։ Անուշահոտ տուալէտային սապօն բարձր արժանաւորութեան։ Ծախվում է ամեն տեղ 1 կտորը 50 կոպ., ½ կտորը 30 կոպ.։ Ոսկէ մէդալ, Լօնդօն, 1893 Թի համար։ Գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգենսի մօտ, Մոսկվայում։
(14,29) 25—13

Լոյս տեսաւ
ՃՄԵՂԻ
X հարուստը կռապաշտ
և
Մախաբի ծակում
գրքոյկը, 28 էջ։ Գինն է 8 կոպ.
Հարցնել գրախանութներում։
(Հ. Կ.) 10—5

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
սրանով պատիւ ունի հրաւիրելու պ. պ. բաժնետէրերին
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,
որ կայանալու է ներկայ 1908 Թի ապրիլի 26-ին, շաբաթ օրը, երեկոյեան ժամը 6-ին, ընկերութեան գրասենեակում, Սօլօլակսկայա փող. տուն Արաֆելովի № 9.

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Անցեալ 1907 Թի հաշւի և հաշւեկշռի քննութիւնն ու վաւերացումը, վարչութեան և վերստուգող յանձնաժողովի զեկուցումների հետ. նոյնպէս ծախսերի նախահաշւի և ընկերութեան գործունէութեան ծրագրի քննութիւնը 1908 Թի համար։
2) Վարչութեան մէկ բացակայ և մէկ ըստ հերթի դուրս եկող անդամների ընտրութիւնները (§ 9)։
3) Վերստուգող յանձնաժողովի երեք անդամի և երեք փոխ-անդամի ընտրութիւնը (§ 21)։

Եթէ ժողովը սահմանված ձայների քանակութեան բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդ անգամ նշանակվում է նոյն տեղը, մայիսի 4-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 11-ին, որը կը համարվի կայացած, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (§ 29)։ (12, 20, 25) 3—1

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES“

21-ին ապրիլի (4-ին մայիսի ըստ ն. տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ „Danube“ շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ՝ մինչեւ Պարիզ, Նիւ-Եօրք եւ Շանխայ (Չինաստանում), Հեռաւոր Արեւելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում Թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ Թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան ամեն այն օր, բացի կիրակի օրերից։ 1—1

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՀԱՆՔԱՅԻՆ
ՋՐԵՐ

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ (Ծծմբային ջրեր) **ԵՍԵՆՏՈՒԿԻ** (աղի-ալկալի) **ԺԵԼԵԶՆՈՎՈԴՍԿ** (հողային) **ԿԻՍԼՈՎՈԴՍԿ** (ածխաթթուային նարզան)

Ջրեր ներքին գործածութեան և վաննաների համար, ցեխաբուժութիւն և ջրաբուժութիւն էլեքտրո-լուսաբուժական կաբինետ (ռէնտգենեան)։ Մեխանոթերապիա ըստ Ցանդերի։ Կումիս, կեֆիր, լեռնային կլիմայական կայարաններ Կիսլովոդսկում և Ժելեզնովոդսկում։ Աջողութեամբ բժշկվում են՝ ոսկրացաւը, սիֆիլիս, կատարրներ, ջղային, կաշուի, կանանց, լեարդի, ստամոքսի, աղիքների, երիկամունքի հիւանդութիւններ, պօդագրա, չաղութիւն, շաքարի հիւանդութիւն, արեան պակասութիւն, շնչառութեան և շատ ուրիշ հիւանդութիւններ։ Մանկական խաղերի փոքրիկ հրապարակներ։ Թատրոններ, սիմֆոնիական կոնցերտներ ամեն օր։ Պարկեր, ծաղկանոցներ, էլեքտրական լուսաւորութիւն, տրամվայ։ Հիւրանոցներ, ճաշարաններ, սրճարաններ, ընթերցարաններ շատ կան յարմար սենեակներ մասնաւոր տներում։ Եկողների թիւն է 40,000.

Սէզոնը Պեատիգորսկում մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը, Եսենտուկում մայիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը, Ժելեզնովոդսկում մայիսի 25-ից մինչև սեպտեմբերի 1-ը, Կիսլովոդսկում յուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը։ Սէզոնի սկզբում և վերջում վաննայի գները և բժշկութեան ուրիշ եղանակները շատ աւելի էժան են, քան սէզոնի մէջ ժամանակը։

Արտօնեալ բժշկութեան իրաւունք վականսիաների որոշ քանակութեամբ իւրաքանչիւր կուրօրտում կարելի է տալ չքաւոր հիւանդներին (որոնք ունեն 600 րուբլուց աւելի տարեկան եկամուտ) միայն հետևեալ ժամանակամիջոցներում. Պեատիգորսկում մայիսի 1-ից մինչև յունիսի 10-ը և օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը, Եսենտուկում—մայիսի 10-ից մինչև յունիսի 10-ը և օգոստոսի 1-ից մինչև սեպտեմբերի 10-ը. Ժելեզնովոդսկում մայիսի 15-ից մինչև յունիսի 10-ը և օգոստոսի 1-ից մինչև 1-ը սեպտեմբերի. Կիսլովոդսկում—յունիսի 1-ից մինչև յուլիսի 1-ը և օգոստոսի 15-ից մինչև հոկտեմբերի 1-ը։ Ուսուցիչներին և ուսուցչուհիներին արտօնեալ բժշկութեան իրաւունք տրվում է ամբողջ սէզոնի ընթացքում։

Արտօնեալ հիւանդները իրաւունք ունեն ձրի բժշկվել վաննաներով, դուշերով, ցեխով և ջրով աղբիւրների մօտ։ Արտօնեալ բժշկութեան իրաւունք ստանալու համար պարտաւորական է գրել առաջուց, ներկայացնելով Ջրերի վարչութեանը (Պեատիգորսկում) բժշկվելու ցանկութեան մասին յայտարարութեան հետ միասին. 1) վկայական որևէ վարչական կամ հասարակական հիմնարկութիւնից խնդրողի չքաւորութեան մասին, 2) բժշկական վկայական, որի մէջ մատնացոյց արված պէտք է լինի այն կուրօրտը, ուր հիւանդը պէտք է բժշկվի, 3) պօստային երկու 7 կոպէկանոց մարկաներ պատասխանի համար։ Այլևս գրել չէ կարելի արտօնեալ բժշկութեան համար. առաջին հերթի համար ապրիլի 1-ին և երկրորդ հերթի համար յուլիսի 1-ին։ Ջրի բժշկութեան մասին իւրաքանչիւր խնդիրքին Ջրերի վարչութիւնը կը հաղորդէ իր պատասխանը մասնաւոր հասցէով։ Առանց նախապէս գրելու արտօնեալ բժշկութեան իրաւունք չէ տրվում։

(Հ. Չ.) 4—4
Ջրերի դիրեկտոր՝ Ս. Տիւրչև

Типографія „Экономія“ Авака Мугдусіанова съ С-мя. Большая Ванкская, д. в. Семинаріи № 3.